

ԿՐԱԿ ԷԼ ՏԱՍ՝ ՃՇՄԱՐԻՏԻՆ ՄԱՅ ՉԿԱՂ¹

Գրականագիտական էսե

Սոկրատ Խանյան

Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ԱրՊՀ

«Քարակերտ երազներ». այսպես է կոչվում Ադրբեջանի ժողովրդական գրող Աքրամ Այլիսլիի վեպ-ռեքվիեմը, որի աշխարհ գալը, բառի բուն իմաստով, գազանային աղմուկ բարձրացրեց Ադրբեջանում: Արվեստի վաստակավոր գործիչ, «Իստիգլալ» և «Շոհրաթ» շքանշանների ասպետ, ականավոր այդ գեղագետը ակնթարթային արագությամբ ենթարկվեց հալածանքի, և ոչ միայն ինքը, այլև ամբողջ ընտանիքը: Սահմնկեցուցիչ էին այն տեսարանները, որ ցուցադրվում էին հանրապետության հեռու-տատեսության տարբեր ալիքներով: Նշանավոր այդ գրողի բոլոր գրքերը նետվեցին հրդեհի մեջ: Պատկերը հիշեցնում էր 1933 թվականի Ռայխստագի հրապարակը, որտեղ Ադոլֆ Հիտլերի հրամանով խարույկի մեջ էին նետվել գերմանական դասական գրականության բոլոր այն նմուշները, որոնցում քարոզվում էին մարդասիրություն, համերաշխություն, կենսասիրություն, հույս ու հավատ մարդկության լուսավոր գալիքի հանդեպ: Նույնը կրկնվեց Ադրբեջանի բոլոր քաղաքներում ու շրջաններում, այն բնակավայրերում, որոնց գրադարաններում կային Այլիսլիի մի քանի տասնյակ բարձրարվեստ հատորները: Եվ դա պատահական չէր, քանզի մերօրյա Ադրբեջանի կառավարող շրջանները, Իլհամ Հեյդար օղլի Ալիևի գլխավորությամբ, ոչ թե հիշեցնում են հիտլերյան ու գերբեկյան ժամանակաշրջանը, այլ գերազանցել են դրանց:

Իսկ ինչո՞ւ Ադրբեջանում կրակի ճարակ դարձրին Աքրամ Այլիսլիի ժողովածուները: Որովհետև նա իր մարդկային խղճի մտոք իր նոր գրքով ասել է ճշմարտությունը հայ ժողովրդի, հայ մարդու աստվածահաճո, աստվածալույս, աստվածաշնորհ, արարող, բարեգութ բնավորության մասին, միաժամանակ մատնանշել այն դաժան վերաբեմունքը, որ ցուցաբերել են հայերի հանդեպ իր երկրի ղեկավարները բութ ու խավարամիտ ամբոխների միջոցով:

«Քարակերտ երազներ» վեպ-ռեքվիեմը Աքրամ Այլիսլին գրել սկսել է 2006 թվականի հուլիսին՝ Այլիսում, ավարտել 2007թ. հունիսին՝ Բաքվում:

¹ Հոդվածն ընդունված է 10.06..13:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ԱրՊՀ հայ գրականության և լրագրության ամբիոնը:

Վեպը հեղինակային թարգմանությամբ ռուսերեն հրատարակվել է Մոսկվայում, «Դրուժբա նարոդով» ամսագրի 2012թ. 12-րդ համարում:

75-ամյա Աքրամ Ալլիսլին (Աքրամ Նաջաֆ օլլի Նաիրով) իր գրական անունը կնքել է Ալլիսլի անվամբ, իսկ Ալլիսը հայոց Ագուլիսի ադրբեջանական ձևն է:

Աքրամը ծնվել է Ագուլիսում, բարձրագույն կրթությունն ստացել Բաքվում: Որպես գրող՝ նա աչքի է ընկել հենց առաջին գործերից: Երիտասարդ տարիքում եղել է «Ազարբայջան» գրական-գեղարվեստական ամսագրի գլխավոր խմբագիրը: Տարիների ընթացքում նա իր մայրենի լեզվով թարգմանել է Տուրգենևի, Կորոլենկոյի, Չեխովի, Դոստոևսկու, Շուկշինի, Այթմատովի, Բյուլի, Մարկեսի, Ռուշոյի երկերը: Հայտնի են նաև նրա բեմականացված պիեսներն ու ցուցադրված կինոսցենարները:

«Քարակերտ երազներ» վեպը կարճ ժամանակաընթացքում ունեցավ հայերեն երկու թարգմանություն: Սույն հոդվածը գրում են Հակոբ Սողոմոնյանի ու Լևոն Գալստյանի թարգմանության հիման վրա:

Վեպն ընդամենը 10 տպագրական մամուլ է, այսինքն՝ 160 էջ: Սակայն գիրքը գեղարվեստական բարձր մակադրակով այնպիսի բազմաշերտ հարցեր է շոշափում, որ կարելի է համարել դարակազմիկ մի երկ, որն անակնկալ էր ոչ միայն ադրբեջանական, այլև թուրքալեզու բոլոր գրականությունների մեջ: Ես նկատի ունեն առանձնապես 1988 թվականի փետրվարից սկսված հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժումը, որը վերածվեց Ադրբեջանի կողմից պարտադրված Արցախյան պատերազմի: Ցնցվեց աշխարհը: Մեր Շարժումն ազդարարեց ԽՍՀՄ փլուզման սկիզբը: ԽՄԿԿ Կենտկոմի գորբաչովյան հրոսակախումբը, փոխանակ վերլուծելու և ճիշտ գնահատելու Ղարաբաղյան շարժման պատճառները և հարցը լուծելու ըստ էության, բռնեց ադրբեջանամետ դիրքորոշում, կազմակերպեց «Կոլցո» («Օղակ») ռազմական ավանտյուրան, որի պատճառով հայաթափվեցին Շամախու, Շամխորի, Դաշքեսանի, Խանլարի, Շահումյանի ավանդական հայկական բնակավայրերը, ինչպես նաև Մարտակերտի և Հադրութի շրջանների տասնյակ գյուղեր: Պատերազմն ընթացավ մինչև 1994 թվականի մայիսը: Ադրբեջանի խնդրանքով կնքվեց զինադադար: Այդ տարվանից սկսած՝ տիրում է «ոչ պատերազմ, ոչ խաղաղություն» քաղաքական մթնոլորտը: Սակայն խնդիրը միայն դրանում չի կայանում: Այդ տարիների ընթացքում Ադրբեջանի կառավարող շրջանները կազմակերպել և շարունակում են իրենց կեղտոտ գործը Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունների, կոնկրետ աշխարհասփյուռ հայության դեմ: Նշված մոտ քսան տարիների

ընթացքում Արցախ են այցելել օտարերկրյա խորհրդարանների մի քանի տասնյակ ներկայացուցիչների խմբեր, առանձին ականավոր գործիչներ, գործարարներ և կրկին ու կրկին համոզվել, որ Արցախը հայկական ոգու, շինարար ձեռքի, մեսրոպյան լեզվի բնօրրաններից է, որտեղ գոյություն ունի պետականություն, ընթացքի մեջ է ցանկալի ժողովրդավարությունը, որ արցախցին իր պապերի մի քանի հազարամյակների պատմություն ունեցող օջախի ժառանգորդն ու տերն է, ուստի նա իրավունք ունի իր տեղն ունենալու ազգերի ընտանիքում և խոսելու բոլորի հետ հավասար իրավունքով: Այդ տարիների ընթացքում, սակայն, թուրքամետ ոչ մի կառավարություն, ոչ մի գործիչ չի բարձրացրել իր ձայնը Արցախի, հայ ժողովրդի օգտին՝ արդարության և ճշմարտության անունից: Ահա հենց նման քաղաքական տհաճ մթնոլորտում, որպես ազնիվ սրտի ճիչ, որպես մարդկային աստվածանվեր խղճի արտահայտություն, ընթերցողի սեղանին հայտնվեց Աքրամ Այլիսլիի «Քարակերտ երազներ» գիրքը, որն արժանի է հանգամանալից վերլուծության ու գնահատման:

«Քարակերտ երազներ» վեպ-ռեքվիեմը բաղկացած է չորս գլխից: Հեղինակը որպես բնաբան, բերել է հետևյալ խոսքը. *«Նվիրվում է իմ երկրացիների հիշատակին, ովքեր իրենցից հետո թողեցին անամոք ցավ»*: Իսկ ո՞ւմ մասին է խոսքը, և անամոք ի՞նչ ցավ է նրան մղել ստեղծելու այդ աննախադեպ երկը:

Աքրամի վեպը գրվելու իր շարժառիթներն ունի: *Առաջին*՝ Աքրամ Այլիսլին ծնվել ու հասակ է նետել Ագուլիսում, որի քարակերտ նյութական հուշարձաններն ու արդեն հայազուրկ թաղամասերի սալարկապատ փողոցները, հայերի հոյակերտ տները, որտեղ ապրում են ադրբեջանցիները՝ հայկական կոտորածներն իրականացրած իրենց նախորդների ժառանգորդները, քաղաքի 12 եկեղեցիներից մի մասի ավերակները և դեռևս կանգուն Աստծո տները, իրենց իսկ՝ ադրբեջանցիների պատմածները 1919 թվականի հայկական կոտորածների մասին, երբեք չէին կարող արթուն չպահել նրա հիշողություններն ու կրած տպավորությունները: *Երկրորդ*՝ Աքրամ Այլիսլին՝ որպես աստվածաշնորհ գրող, չէր կարող չհետաքրքրվել իր ծննդավայր Ագուլիս-Այլիսի պատմական անցյալով, նրա մասին եղած պատմագրություններով, որոնք գոյություն ունեն Երևանի «Մեսրոպ Մաշտոց» մատենադարանում և այլ գրադարաններում թե՛ հայերեն և թե՛ ռուսերեն: *Երրորդ*՝ նա չի հաշտվել Սումգայիթում և Բաքվում կազմակերպված հայկական ջարդերի հետ:

Ե՛վ իր ժողովրդի, և՛ հայոց պատմության իմացությունը չէին կարող փակել նրա աչքերն ու ականջները: Նրա հոգու խորքում մարած չի եղել

համաշխարհային մեծանուն արվեստագետների այն խորհուրդը, որ գեղագետը իրավունք չունի նետվելու ազգայնամոլության ճահիճը, որ հայրենասիրությունը չի կարելի շփոթել այլատյացության հետ: Ըստ իս` ահա այն գործոնները, որ Աքրամ Ալլիսլիին մղել են ստեղծելու տվյալ վեպը, որ պատիվ կարող է բերել ոչ միայն իրեն, այլև այն ադրբեջանցի գրողներին, ովքեր չեն կորցրել արվեստագետի խղճի և պատվի զգացումը, սակայն վախենում են բարձրացնել իրենց հոգու ձայնը: Այս առումով կարելի է ընդգծել, որ միայն իր այս վեպով Աքրամ Ալլիսլին դասվելու է համաշխարհային հումանիստ արվեստագետների շարքը: Հեռու չէ այդ ժամանակը: Եվ ոչ միայն այդ: Այս վեպի շնորհիվ ընդգծվելու է նաև նրա խիզախությունը, հաստատվելու է այն գաղափարը, որ անհատներն ընդունակ են և կարող են փրկել իրենց սեփական ժողովրդի պատիվը:

«Քարակերտ երազներ» վեպի առաջին գլուխը բացվում է Բաքվի ողբերգական դեպքերը բնութագրող հետևյալ բնաբանով. *«Ծեր հանդերձապահուհու առեղծվածային մահը, նշանավոր դերասանի մահացու վտանգավոր կատակը և ատրճանակ-կուստոմսը»*: Բացելով այս բնաբանի փակագծերը` հեղինակն ընթերցողին տանում է Բաքվի հիվանդանոցներից մեկը, ուր ապաքինվում էին ոչ միայն հիվանդ քաղաքացիները, այլև արդեն ավելի շատ ջարդուփշուր արված անմեղ մարդիկ: Դրանցից էին կատակերգական դերերի հայտնի կատարող Նուվարիշ Ղարաբաղլին, որը ժողովրդի մեջ հայտնի է Համլետ, Օթելլո, Այդին, Քեֆլի Իսկանդեր և այլ կերպարների մարմնավորմամբ: Մահացու ծանր վիճակում է Սադայ Սադրլին, որին Հայաստանից փախած ազերի երիտասարդները, որ Բաքվում ստացել էին «երազներ» անունը, ծեծել ու ջախջախել էին այն պատճառով, որ փորձել է կատաղած ամբոխից փրկել մի ծեր հայ մարդու, որ տնային շորերով դուրս էր եկել հաց գնելու: «Երազներ» կոչվող ավազակները այդ հային սկզբում նետել էին Պարապետ կոչվող զբոսայգու ջրավազանը, ուղիղ սառցաջրի մեջ: Նա չի դիմացել ջրի սառնությանը, փորձել է դուրս գալ: Իսկ մարդասպանները կանգնել են ջրավազանի եզրին և ոտքերով խփել նրան, ծեծելով սպանել: Իսկ ականավոր դերասան Սադայ Սադրլին հենց այդ պահին հայտնվել է անիծյալ տեղում ու ձգտել օգնել հայ ծերունուն: Ինչպես պատմում է դերասան Նուվարիշ Ղարաբաղլին, Սադրլին չի դիմացել. չէ՞ որ նա դերասան է, հումանիստ մարդ: Սիրտը չի հանդուրժել, նետվել է օգնելու հայ ծերունուն:

Դժվար չէ եզրակացնել, որ Աքրամ Այլիսլին՝ որպես արվեստագետ, չի ընդունել Ադրբեջանի քաղաքական գործիչների գազանաբարո քաղաքականությունը հայերի հանդեպ:

Հիվանդանոցի վիրաբույժը՝ պարսիկ Ֆարզանին, ոչ միայն ձգտել է փրկել ականավոր դերասանին, այլև իմանալով Սադրըլլիի լավ արարքի մասին՝ հաստատել է. «Չենց այդպես կվարվեր յուրաքանչյուրը, ով իրեն մարդ է համարում: Սակայն այս քաղաքի բնակիչները, ասես պայմանավորված, ձգտել էին հեռու մնալ մարդկայնություն կոչվածից: Թվում էր՝ նրանց արդեն նույնիսկ ձեռնտու էլ չէր պահպանել մարդկային դեմքը»¹ (Աքրամ Այլիսլի, «Քարակերտ երազներ», «Էդիթ պրինտ» հրատ., Երևան, 2013, էջ 12):

Բժիշկ Ֆարզանին զարմանքով է խոսում Բաքվում տեղի ունեցող հակահայկական հանցագործությունների մասին: Նա ցավով է նշում, թե ինչպես մետրոյում մի քանի ադրբեջանցի կանայք հարձակվել են տասնչորս-տասնհինգ տարեկան մի հայ աղջկա վրա, ծեծել, ջարդել, որին բախտի բերումով, հասցրել են հիվանդանոց: Կատարվել է բարոյագույն վիրահատություն: Իսկ դրանից մի քանի օր առաջ ինչ-որ դեպքերատ ադրբեջանցի բանաստեղծ ներխուժել էր հիվանդանոց և ծեծելով աշխատասենյակից դուրս վնդդել բժշկին (որը քառասուն տարի աշխատել էր սրտաբանական բաժանմունքում) միայն այն պատճառով, որ վերջինս հայ է: Այդ դեպքից հետո հիվանդանոցում ոչ մի հայ չմնաց՝ ոչ բժիշկ, ոչ սպասարկող: Ոմանք թաքնվել էին տանը, մյուսներն ընդմիշտ հեռացել էին Բաքվից:

Վիրաբույժի հարցին, թե որտեղացի է Սադայ Սադրըլլին, Նուվարիշ Ղարաբաղլին պատասխանել է. «Սադայ Սադրըլլին ծնվել է Նախիջևանում: Այնտեղ Օրդուբադի շրջանում Այլիս անվամբ մի գյուղ կա: Շատ հին գյուղ է, բժիշկ, թեև ես երբեք չեմ եղել: Մի ժամանակ, ասում են, այնտեղ շատ հայեր են ապրել: Նրանց եկեղեցիներից յոթը կամ ութը ոնց որ թե առ օրս կանգուն են: Երևում է՝ այդ հայերը շատ խելացի, լավ մարդիկ են եղել»²: Ինչ վերաբերում է Սադայ Սադրըլլիին, ապա նա իր անփոփոխ կարծիքն ունի: Նա պնդում է. «Հայերը չէ, մենք ինքներս ենք վատը»: Եվ չի վախենում: Ասում է ամենուր՝ և թատրոնում, և չայխանաներում»³:

Վեպի առաջին գլխից սկսած, որպես կենտրոնական կերպարներ, հանդես են գալիս Սադայ Սադրըլլին, Նուվարիշ Ղարաբաղլին, հիվան-

¹ Աքրամ Այլիսլի, Քարակերտ երազներ, էջ 12:

² Նշվ. աշխ., էջ 13:

³ Նշվ. աշխ., էջ 13-14:

դանոցի վիրաբուժական բաժնի վարիչ Ֆարզանի Ֆարիդ Հասանին, Սադրղլիի կինը՝ Ազադա խանունը, Ազադայի հայրը՝ բժիշկ Աբասալիևը և ուրիշներ:

Դեպքերի և իրադարձությունների ընթացքը շաղկապվում է Բաքվում տեղի ունեցած հակահայկական հանցագործությունների հետ: Ամեն օր քաղաքում տեղի էին ունենում աննկարագրելի դաժանություններ հայերի հանդեպ: Այսպես՝ Բաքխորհրդի աննշան, բայց շատ փողաբեր պաշտոն զբաղեցնող աշխատակիցներից մեկը՝ մի հաղթանդամ ցմփոր աժդահա, հափշտակում է թատրոնի հին աշխատող, հանդերձապահուհի Գրետա Սարկիսովնա Մինասովայի բնակարանը, որը նա ստացել էր Նուվարիշի հետ նույն օրը և սարքում այնտեղ ամենախսկական պոռնկատուն: Իսկ այդ հանցագործ աժդահան Շուշիի հարուստ մարդկանցից մեկն էր՝ Շահաջար Արմադանով անունով: Ավելի սահմեկեցուցիչն այն էր, որ մի օր՝ առավոտ կանուխ, երբ լույսը նոր էր բացվում, բակում աղմուկ է բարձրանում այն առիթով, որ Գրետա Սարկիսովնայի վտիտ ու ծերացած մարմինը նետվել է պատշգամբից: Ցավալին նաև այն է, թե իբր այդ հայուհին մահից առաջ զղջման այսպիսի նամակ է թողել. «Ատում եմ ինձ՝ հայերի կատարած հանցագործությունների համար: Ես արհամարհում եմ իմ ազգին և այդ պատճառով էլ չեմ ուզում ապրել այս աշխարհում: Ղարաբաղը Ադրբեջանին է պատկանում: Կեցցե Ադրբեջանը»¹:

Բժիշկ Նուվարիշը չէր կասկածում, որ այդ «ինքնասպանությունը» հենց նույն շուշեցի հրեշի ձեռքի գործն է:

Վեպում էջ առ էջ ներկայացվում են Բաքվում տեղի ունեցած քաղաքական իրադարձություններն ու բարձիթողությունը: Յուրաքանչյուր անհատի կյանք վտանգված է: Կազմակերպվում է «Ժողովրդական ճակատ», որի յուրաքանչյուր անդամ մեկական կամ նույնիսկ մի քանի զենք ուներ:

Վեպի պատումի ընթացքում հանդես է բերվում նաև թատրոնի տնօրեն Մոպասան Միրալամովը, որի հետ առնչվում են ոչ քիչ իրադարձություններ և մարդկանց ճակատագրեր:

Աքրամ Ալիսլին ճշմարտացիորեն ներկայացնում է Հանրապետության Տիրոջը՝ որպես փառամոլ ինքնակալի: Նա՝ այդ Տերը, կարող էր անել ամեն ինչ, բնակարաններ նվիրել կամ զրկել, պարզներ տրամադրել կամ չեզոքացնել: Ինչ վերաբերում է հայ ազգաբնակչության հանդեպ վարած նրա քաղաքականությանը, բավական է բերել գրքի հետևյալ հատվածը. «Այդ երեկո Ախունդովի «Մուսյո ժողդանը» խաղալուց հետո թատրոնի ամբողջ կոլեկտիվը հավաքվեց տնօրեն Մոպասան Միրալամովի աշխա-

¹ Աքրամ Ալիսլի, Քարակերտ երազներ, Երևան, 2013, էջ 19:

տասենյակում: Նուվարիչը դերվիչ Մաստալի շահ խաղաց ներկայացման մեջ, և պարզ է դարձել՝ նրա խաղից գոհ է մնացել ինքը՝ Առաջինը: «Դու «Մեռյալներում» Շեյխ Ահմեդ գերագանց ես խաղում,- ասել էր նա: Չեռուստացույցով երկու անգամ նայեցի: Այդպիսի դերեր շատ խաղա»:

Ակնհայտ էր, որ այդ օրը, ճամփա ընկնելով թատրոն, Տերը նախապես որոշել էր բնակարաններ հատկացնել մի շարք աշխատողների, և երջանիկների թվում անպայման պետք է լիներ Գրետա Մինասովան: «Այստեղ պետք է որ մի հին աշխատող լիներ՝ Մինասովան: Նա դեռ աշխատողն է թատրոնում», - ձևի համար տնօրենին հարցրեց Տերը՝ անշուշտ, լավ իմանալով, որ նա թատրոնից երբեք և ոչ մի տեղ չի գնացել: Եվ Գրետա Սարկիսովնան, շփոթված անսպասելի հրավերից, մտավ Մոպասանի աշխատասենյակ, մեռյալից ավելի գունատ դեմքով, իսկ դուրս եկավ այնտեղից երջանկությունից արտասվելով և անվերջ կրկնելով. «Շնորհակալություն, որդիս, անչափ շնորհակալ եմ»¹:

Ես՝ ապրելով և աշխատելով Բաքվում 25 տարի, նախ «Կոմունիստ» թերթի խմբագրությունում և ապա՝ որպես գրականագետ-մանկավարժ, ականատես եմ եղել բոլոր այն խմորումներին, որ ներկայացված են Այլիսլիի վեպում: Լավ հիշում եմ, թե ինչպես քաղաքական խմորումների հասու մեր ընկերներից մեկը պատմեց, թե ինչպես Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի Առաջին քարտուղար Չեյդար Ալիևը խորհուրդ էր տվել պաշտոնյաներին, որ տարիքավոր հայ գործիչներին ձեռ չտան, իսկ երիտասարդների ճամփան փակեն: Եվ նա հանձնարարել էր 5-րդ անգամ 70-ն անց բանաստեղծ Սամվել Գրիգորյանին առաջադրել Ադրբեջանի Գերագույն խորհրդի պատգամավոր, փոխարենը վերացնել Հանրապետության գրողների միության հայկական սեկցիան՝ դրանով իսկ փակուղի ստեղծելով հայ երիտասարդ գրողների համար:

Կասկածից դուրս է, որ Աքրամ Այլիսլին իմացել է այդ մասին՝ ստեղծելով թատրոնի հին աշխատակցուհի Գրետա Մինասովայի կերպարը, որին շուտով ցած են նետում Տիրոջ շնորհած բնակարանից, որ գտնվում էր շենքի 10-րդ հարկում:

Առաջինի քաղաքականության հետ չէր հաշտվում անվանի դերասան Սադայ Սադըղլին: Նա խորհում էր այսպես. «Բաղնիքի բոլով բարեկամներ է ձեռք օգում: Ամեն մեկին մի բան տալիս, մարդուց խլում է ամենակարևորը՝ արժանապատվությունը: Ամորձատում է ժողովրդի հոգին, որ բոլորին դարձնի սուսիկ, հնազանդ»²: Իսկ երբ Առաջինը դիմել է նրան՝ թե

¹ Աքրամ Այլիսլի, *Քարակերտ երազներ*, էջ 29:

² Նշվ. աշխ., էջ 96:

ինչի կարիք ունի, Սադայ Սադըղլին պատասխանել է. «Ես ոչ մի բանի կարիք չունեմ»:

Աքրամ Ալլիսլին վեպում ստեղծել է երազային-տեսիլքային պատկերներ: Նման էջերից է Նուվարիշ Ղարաբաղլու երազը, որի ժամանակ նրան հալածում է Գրետա Սարկիսովայի ուրվականը մահից հետո:

Վեպի հենց առաջին գլխի մեծ մասում ուրույն տեղ է գրավում Սադըղլիի աները՝ բժիշկ Աբասալիևը, որը նույնպես ագուլիսեցի էր, և նրանք ամենուրեք միայն ու միայն Ագուլիսի մասին են խոսում, նշում, որ այնտեղ շատ հայեր են եղել ու շատ հաշտ են ապրել մահմեդականների հետ: Աբասալիևն առանձնապես գովում էր հայերին և ասում. «Այդպիսի կիրթ, ազնիվ, աշխատասեր մարդիկ աշխարհում ուրիշ ոչ մի տեղ չկան»:

Սադըղլին չէր վստահում կուսակցական բարձրաստիճան պաշտոնյաներին: Կենտկոմի անդամներից մեկի հենց դեմքին նետել է. «Էն, ինչ ձեր գրպանում է, ոչ թե կուստոմս է, այլ ատրճանակ: Ձեր ատրճանակով դուք վախեցնում եք ժողովրդին, պահում ասի մեջ, որ ինքներդ կարողանաք չվախենալով ապրել»¹:

Սադայ Սադըղլին կյանքում մի կուռք ունի՝ աները՝ բժիշկ Աբասալիևը և մեկ էլ իր պաշտելի համազյուղացին՝ Յայկանուշ անունով մի հայուհի: Կարոտի զգացումների նկարագրությունից հետո հեղինակը պատկերում է 1988 թվականի դեկտեմբերը: Արդեն մի քանի ամիս Բաքվի փողոցներում ոչ միայն երեկոները, այլև նույնիսկ ցերեկները դժվար էր միայնակ կամ զույգերով անցնող մարդ տեսնել: Հիմա մարդիկ շրջում էին ամբոխով, հոտերով: Եվ խոսելու, բղավելու ու բարբառելու լիիշխան իրավունքը տրված էր միայն այդ ամբոխին: Ու առավել տարօրինակ էր այն, որ բառերի քանակությունը, որ բղավում էին այդ արարածները, հավասար էր բառերի քանակին, որը, հավանաբար, օգտագործել են նախնադարյան մարդիկ որսի ժամանակ.

Ա-զա-տու-թյուն,

Յե-ռա-ցիր,

Ղա-րա-բաղ:

Վերջին օրերին այդ մարդիկ իրենց բառապաշարը հարստացրել էին ևս երեք արտահայտությամբ.

«Էրմանիստան,

Օլմալիսան,

Վասսալամ»:

Այսինքն՝

¹ Աքրամ Ալլիսլի, Քարակերտ երազներ, էջ 34:

«Հայ ես՝

Մահ քեզ,

Սա է վերջը»:

Այս սարսափազդու պատկերով ավարտվում է գրքի առաջին գլուխը:

* * *

Վեպի երկրորդ գլուխը բացվում է հեղինակի հիացական խոսքով՝ ուղղված իր ծննդավայրին. *«Ով Աստված ամենակարող, բարի եղիր, ասա՛ հիմձ, Դո՛ւ ես երկնել Այլիսն իմ, թե՞ Այլիսն է երկնել Քեզ»:*

Այդ հիացական բացականչությունից հետո ներկայացվում է աստվածային այն գեղեցկությունը, որ ունի Ագուլիսը, համեմատվում Միջագետքի, Ակրոպոլիսի, Պարթենոնի և այլ հրաշալի տեսարժան վայրերի հետ: Այստեղ ևս հեղինակն օգտագործում է տեսիլքային հնարանքը: Երագների մեջ է Սադայ Սադըղլին, որ պառկած է Բաքվի հիվանդանոցում: Ինչպես նշում է հեղինակը. «Այս ներաշխարհում էր հայտնվել դերասանն այն պահից ի վեր, ինչ կորցրել էր գիտակցությունը»¹:

Ուշագրավն այն է, որ Սադայ Սադըղլիի խոհերն ու երազանքները կապված են ոչ միայն Ագուլիսի, այլև Էջմիածնի հետ: Ինչպես գրում է Աքրամը. «Սադայ Սադըղլին երբեք չէր եղել Էջմիածնում: Սակայն վերջին օրերին գրեթե ամեն երագում ինչ-որ բարձրաբերձ քարերի ու ժայռերի միջով գնում էր նրա կողմ, և այդ երագներից յուրաքանչյուրում նա մոլորվում էր Վուրագըրդի եկեղեցու կեսճանապարհին, անհամար քարակերտ աստիճանների ու սանդղավանդների մեջ, որոնց մասին շատ էր կարդացել գրքերում և տեսել կինոներում»²:

Աքրամ Այլիսլին՝ արձակագրի երկարամյա փորձով հարուստ, իր տաղանդի շնորհիվ դիմելով ստեղծագործական տարբեր հնարանքների, ներկայացնում է սուևգայիթյան դեպքերը, որ բարոյահոգեբանական ծանր հետք են թողել ադրբեջանցի այնպիսի մտավորականների վրա, ինչպիսին իր վեպի գլխավոր հերոսը՝ Սադայ Սադըղլին է:

Գրողն իր հարազատ երկրի անհեռատես, գազանաբարո, երիտթուրքերի արարքներով զինված ղեկավարների կազմակերպած սուևգայիթյան ցեղասպանության աններելի մեղքերը քավելու հարց է շոշափում: Եվ այդ գաղափարի կրողը Սադայ Սադըղլին է: Վերջինիս տեսիլքի փոխված ցանկությունն է՝ մեկնել Էջմիածին, անձամբ կաթողիկոսի օրհնությամբ ընդունել քրիստոնեություն, այնտեղ ընդմիշտ դառնալ վանական, հայերի

¹ Աքրամ Այլիսլի, Քարակերտ երագներ, էջ 49:

² Նշվ. աշխ., էջ 90:

հանդեպ մահմեդականների գործած չարիքը ներելու աղոթքով Աստծուց թողություն հայցել: Դա մի ցանկություն էր, որ համակել էր Սադայ Սադըղլիին սուևգայիթյան դեպքերից հետո: Նույնիսկ հետագայում նա չէր կարողանում հասկանալ՝ երազո՞ւմ, թե արթմնի է այդ ցանկությունը համակել իրեն: Սակայն հենց այդ առավոտ նա արթնացել էր բերկրալից, նախաճաշելուց հետո, հուզախռով հաղորդակից դարձրել կնոջն իր նոր ֆանտաստիկ գաղափարին: Կինը՝ Ազադա խանումը, իմանալով այդ մասին, զանգում է Մարդաքյան՝ իր հորը: Իսկ հայրը՝ բժիշկ Աբասալիևը, փեսայի երազանքը կատակի վերածելուց հետո հայտնում է աղջկան, որ ինքը նոր գտել է այն հայ վաճառականի օրագիրը, որ վերաբերում է Ազուլիսի պատմությանը: Դա Ջաքարիան է եղել, գրագետ մի մարդ, նաև լավ վաճառական: Դայրը զարմանքով հարցնում է, թե հայերն ինչու են ստեղծել Ազուլիսը՝ դրախտային այդ անկյունը՝ շնագայլերով ու օձերով լի լեռների գրկում, ուր քարերը միլիոն անգամ շատ են, քան հող ու ջուրը: Մի՞թե աշխարհում հայերի համար այլ տեղ չկար: Միևնույն է, նա Ազուլիսն ավելի գեղեցիկ է համարում, քան Էջմիածինը: Ի պատասխան կատակի՝ Ազադան հասկացնում է հորը, որ Սադայը հիվանդագին է վերապրում բաբվեցի յուրաքանչյուր հայի ճակատագիր, ասես միայն ինքն է պարտավոր պահպանել նրանց բոլոր ոտնձգություններից: Սադայի համար ցանկացած հայ դարձել է ավելի թանկ, քան ինքը: Նա Ազուլիսի այս հայերի մասին է մտածում միայն և բնավ չի կարողանում հասկանալ, որ մերօրյա հայերը մեր այս անգլուխ վայրահաչներից լավը չեն: Նա ոչ մի կերպ չի կարողանում մոռանալ Ազուլիսում թուրքերի կազմակերպած սպանողը, որն ինքը չի էլ տեսել:

Ազադան դիմում է հորը, որ նա է այդպես դաստիարակել փեսային՝ Սադային: Աբասալիևը պատասխանում է. «Ոչ, աղջիկս, այստեղ ես գրեթե մեղք չունեմ: Նա ի ծնե ազնիվ մարդ է, խղճմտանքով և ոյուրագագ: Եվ խնդիրն այն չէ, թե ինչպիսին են դարձել ներկայիս հայերը, այլ այն՝ ինչպիսին ենք մենք հիմա: Սադայի ցավն այն կամ ներկայի հայերը չեն: Նա մտածում է իմ ու քո՝ մեր ազգի մասին միայն»¹:

Գրողն իր ստեղծած կերպարի միջոցով առաջ է քաշում բարության և գթասրտության սկզբունքները, առանց որոնց չի կարող լինել ոչ անհատների և ոչ էլ ազգերի փոխադարձ սեր ու հարգանք:

Այլիսցի ադրբեջանցիները պատմական Ազուլիսի վանքը անվանել են Վանգ՝ այնքան հոյակերտ, որ Աբասալիևը հաճախ է կրկնել. «Վանգի մեր եկեղեցին Էջմիածնի ճշգրիտ կրկնօրինակն է»: Այս խոսքերը նա շատ էր կրկնել ապագա փեսայի՝ Սադայի ներկայությամբ:

¹ Աքրամ Այլիսի, Քարակերտ երազներ, էջ 52:

«Քարակերտ երազներ» վեպն ստեղծելիս Աքրամ Այլիսլին դիմել է կոմպոզիցիոն տարբեր ձևերի, ինչպես նաև սյուժեի զարգացման տարբեր եղանակների: Նա անդրադարձների օգնությամբ ներկայացնում է անցյալը, ներկան, ապա բնութագրում ժամանակաշրջանները: Այս ամենի ընթացքում նրա ուշադրության կենտրոնում Ազուլիսն է՝ ադրբեջաներեն դարձած Այլիս: Նա տեսել և համոզվել է, որ Ազուլիսը չեն մոռանում այն հայերը, ում արմատներն այդ բնակավայրից են, նաև նրանք, ում հետաքրքրում է նրա պատմությունը: Այս առումով հետաքրքրությամբ են ընթերցվում այն էջերը, որտեղ նկարագրվում է ազուլիսեցի Յայկանուշի տասներեք-տասնչորս տարեկան թռնուհու՝ Լյուսիկի այցը Ազուլիս 1952 թվականին: Այդ ամռանը առաջին անգամ Լյուսիկը Երևանից եկել էր Ազուլիս և անդադար նկարում էր գլխավոր եկեղեցին՝ նրանում նշմարելով Աստծո լույսն ու ժպիտը, էջմիածնի կրկնօրինակը: Այդ երևույթը հետաքրքրում էր նաև Սադային:

Այս համապատկերին գրողը ներկայացնում է բժիշկ Աբասալիևին իր դատեր՝ Ազադայի հետ: Նա տեղավորվելուց հետո ամեն առավոտ՝ մինչև արևածագ, զբոսանքի էր գնում Վանգի եկեղեցի: Բժիշկ Աբասալիևը, ինչպես և իր մեծ տոհմը, վայելում էր ազուլիսեցիների հարգանքը: Նա կարող էր մտնել ցանկացած տուն, անել նաև դիտողություններ այն կանանց, ովքեր մաքուր չեն պահում բակերը: Նա պաշտպանում է հայուհի Անիկոյին, որը միշտ նախատում էր ծերունի Միրալի Քիշիին, որ եկեղեցին վերածել էր խորհանոցի: Աբասալիևի խորհրդով նա ազատում է եկեղեցին, լավ մաքրում, լվանում ամեն բան, իսկ բանալին անձամբ հանձնում Անիկոյին:

Աքրամ Այլիսլին իր հերոսների միջոցով ներկայացնում է Ազուլիսի անցյալն՝ ինչպես եղել է: Այսպես՝ բժիշկ Աբասալիևը պատմում է, որ ժամանակին Ազուլիսում եղել է շուրջ տասներկու եկեղեցի: Դրանցից ութի տեղը գիտեր Սադայ Սադրղլին: Մյուս չորսի ավերակների տեղը հայտնի չէր նույնիսկ բժիշկ Աբասալիևին:

Յեղինակը, սակայն, ավստոսանքով նշում է, որ այդ ութ եկեղեցիներն այնքան էլ հնարավոր չէր եկեղեցի կոչել, որովհետև նրանցից մնացել էին միայն խղճուկ ավերակներ:

Գրքից իմանում ենք, որ այդ եկեղեցիներից ամենահինը այլիսցիները կոչում էին Իստազըն: Նույնիսկ հիմա Այլիսում որևէ մեկին անհնար է համոզել, որ իրականում այն կոչվում է ոչ թե Իստազըն, այլ Աստվածատուն, որը հայերեն նշանակում է հենց Աստծո տուն, և այդ ավերակները, որոնցից անվնաս մնացել են լոկ երկու պատ և երկու նկուղ, մի ժամանակ հայերի համար եղել են իրենց Մեքքան ու Մեղինան: Այսքանից հետո

հեղինակը կատարում է այսպիսի հուզիչ ընդհանրացում. «Գյուղից զգալի հեռու գտնվող այդ «հայկական Մեքքայի» փրկված նկուղները հիմա հովիվների և անասունների կացարան են սոսկ, իսկ նրա ավերակ պատերը կանգուն էին մնացել ասես լոկ նրա համար, որ մարդկանց հիշեցնում են, թե այս աշխարհում անցողիկ է ամենայն բան, անգամ եթե այն հենց «Աստծո տունն է»¹:

Այլիսում մյուս երեք եկեղեցիները կոչվում էին Աքքիլսե (Սպիտակ եկեղեցի), Եթին քիլսե (Որբ եկեղեցի) և Մեյդան քիլսե (Յրապարակի եկեղեցի): Իսկ պահպանված եկեղեցիները՝ Վուրագըրդը, Վանգը, Քարակերտ եկեղեցին և Դոպը, թեև մնացել էին առանց Աստծո խնամքի, սակայն դեռ լիովին չէին կորցրել երբեմնի վեհությունը:

Ա. Այլիսիին ամեն դեպքում ճշմարտացիորեն շեշտում է, որ հայերն այստեղ ավելի հին բնակիչներ էին, քան մահմեդականները: Նա գրում է. «Թե ինչպես էին կառուցել այդ չորս եկեղեցիները, որոնցից յուրաքանչյուրի թիկունքում բառիս բուն իմաստով կանգնած էր մի լեռ, Այլիսի մահմեդական բնակչությունը, բնականաբար, երբեք չէր տեսել: Սակայն այդ եկեղեցիների և նրանց թիկունքում կանգնած լեռների ներդաշնակությունը նկարելու համար հայ լինելը կամ պատմության այբուբենն իմանալը բնավ պարտադիր չէ: Յուրաքանչյուր եկեղեցի այն գույնի էր, ինչ նրա թիկունքում կանգնած լեռը, ասես ամբողջությամբ կերտվել էր այդ լեռից՝ հատվելով և դրվելով այնտեղ, ուր Աստծուն դյուրին և հարմար կլինի հայել այն: Եվ յուրաքանչյուր եկեղեցի առանձին թվում էր այն լեռան հարազատ զավակը, որի ստորոտում կառուցվել էր»²:

Ա. Այլիսիին ստեղծել է մի շարք կերպարներ, որոնք մի կողմից ներկայացնում են Ազուլիսի մահմեդական ազգաբնակչության միստն ու կացը, սովորությունները, ապրելու կուլտուրան և բնավորության հիմնական գծերը, մյուս կողմից դրանք շաղկապում է նրա հին տերերի՝ հայերի ճակատագրի հետ: Այդ կերպարներից են Ջամալը՝ Սադայի դասընկերը մինչև 7-րդ դասարանը, որից հետո նա զբաղվել է հովվությամբ, խելագար Գուլուն՝ անսովոր բնավորության տեր, որը միշտ օրերի հետ է զրուցում, և՛ նրանք, ովքեր մի օր՝ 1919-ին, միացան Ադիֆ բեյի հրոսակներին, սրի քաշեցին հայ հարևաններին

Ավելորդ չեմ համարում բերել հայերի ցեղասպանության այդ սահմուկեցուցիչ պատկերները, որոնց մասին պատմում է բժիշկ Աբասալիևը Սադայ Սադըղլիին:

¹ Աքրամ Այլիսի, Քարակերտ երազներ, էջ 57:

² Նշվ. աշխ., էջ 58:

Շրջելով Ազուլիսի հայկական թաղամասում՝ բժիշկը ներքին մի ցավով ու վրդովմունքով պատմում է, որ, իրոք, գյուղում ջիներ, այսինքն՝ ոգիներ կան: «Գիտե՞ս ում տանն է ապրում Գուլուն,- ասում է բժիշկը,- մի ժամանակ այստեղ ապրել է մի հայ՝ Մինաս անունով քարտաշ վարպետը: Նրա նախնիներն էլ հնուց ի վեր քարտաշներ են եղել: Եկեղեցիներից շատերի քարերը Մինասի նախնիների ձեռքի գործն են: Մինասն էլ է պատրաստել սանդեր, երկանքներ, ջրաղացքարեր, այլևայլ բաներ: Այս գիժ Գուլուի պապ Աբդուլան սրա պես անբան էր ու քարսիրտ տխմար: Շուկայում բեռնակիր էր աշխատում, համբալ էր, ամվակից ջուր էր կրում թեյարաններին, մի քանի գրոշ ձեռք գցում ու մի կերպ ապրում: Եվ տես ինչ եղավ. երբ Ադիֆ բեյը հրամայեց կոտորել Այլիսի հայերին, այդ շուն Աբդուլան հանկարծ առյուծ կտրեց: Վազեց տուն, վերցրեց կացինն ու նետվեց Մինասի տուն: Մինասը նստել ու հանգիստ քար էր տաշում: Սրիկա Աբդուլան կացինը ձեռքին հարծակվեց Մինասի վրա ու կտրեց նրա գլուխը, իսկ հետո չխնայեց խեղճի ոչ կնոջը, ոչ երեխաներին»¹:

Ներկայացնելով այս սարսափելի տեսարան-եղելությունը՝ բժիշկն ավելացնում է, որ Գուլուն չի կարող հանգիստ ապրել Մինասի տանը: «Չի կարող, Աստծով են երդվում,- հաստատում է նա,- խոշտանգված Մինասի ոգին նրան երբեք հանգիստ չի թողնի: Աստված այնքան մոռացկոտ չէ, որ ների նման հրեշավոր ստորությունը»²:

Շարունակվում է բժշկի և Սադայ Սադըղլիի շրջագայությունն ու գրույցը: Բժիշկը նշում է, որ Այլիսի յուրաքանչյուր ընտանիքում, որը հայի տուն է հափշտակել, հոգեկան հիվանդներ կան, որ այդ ընտանիքներից ոչ մեկում խաղաղություն չի տիրում: Եվ նա թվարկում է նման ընտանիքները: Դրանցից են ադրբեջանցիներ Մուզաֆարի, Կաբան Գուլամի, Ղազանֆարի, Մահմեդաղայի և այլ ավազակների ընտանիքները:

Մտնելով ադրբեջանուհի պառավ Նուբարի բակը, հարցուփորձ անելով նրա դրության մասին՝ բժիշկը կրկին ներկայացնում է մի ուրիշ դաժան իրողություն: Բժշկի հարցին, թե՞ պառավը հիշո՞ւմ է այս տանն ապրող հային, նա պատասխանում է. «Բա ոնց, Առաքելն էր, դու ինձնից լավ գիտես: Ու կարծես հենց երեկ էր, որ նրա կին Էսփին ցած նետվեց ժայռից: Ինչ գեղեցիկն էր: Հիշո՞ւմ ես՝ ինչպես էր երգում հարսանիքներին: Եվ իրենց, և՛ մեր՝ մահմեդականներիս հարսանիքներին»³: Շարունակվում է գրույցը, հայտնի է դառնում, որ Առաքելին սպանել են իր հողամասում աշխատելիս. նրան սպանել է օձ որսացող Աբդուլ-ալիի տղան: Պարզվում

¹ Աբրամ Այլիսի, Քարակերտ երազներ, էջ 63-64:

² Նշվ. աշխ., էջ 64:

³ Նշվ. աշխ., էջ 67:

է նաև, որ Առաքելի տանն ապրող պառավ Նուբարը ևս օրերով խոսում է ինքն իր հետ, որ հատուկ է հոգեկան հիվանդներին:

Մի կողմ թողնելով հոգեկան հիվանդների մասին գրույցը՝ բժիշկը դիմում է Սադային. «Այլիսի բնակիչներից ոչ մեկը, որ այդ ժամանակ մտադրվել էր իր կյանքը բարելավել հայերի հանդեպ բռնություն գործելով, առ օրս հանգիստ չունի: Ինքդ ես լսում, թե ինչպես են ամեն երեկո բղավում և իրար հայիոյուն Մուղղուսի Ալեքսանի տունը հափշտակած Ղազանֆարի երկու որդիները: Եղբայրները պատրաստ են իրար կոկորդ կրծել: Ահա այդպես զավակները վերին պատիժ են կրում ծնողների մեղքերի համար: Նրանց որդիները, ում մենք տանջել ենք, մեզ հանգիստ ապրել չեն տալիս: Ահա մսագործ Մահմեդաղան փողոցում դաշույնով մորթեց քահանա Սկրտիչի դստերը: Ես Մահմեդաղային ծեր տարիքում չեմ տեսել, բայց Բաքու այցելածները պատմել են, որ նա սատկել է շան մման»¹:

Ագուլիսում հայկական կտորածներին մասնակից և ականատես մարդիկ հետագայում պատմում էին նոր սերունդներին: Ինչպես գրողն է նշում, այդ սպանդի մասին յուրաքանչյուրը պատմում էր յուրովի՝ ելնելով մարդու և մարդկայնության մասին իր անձնական պատկերացումներից: Չնայած դրան՝ վկաներից ոչ ոք չէր թաքցնում այն, ինչ տեսել էր: Տարբեր մարդկանց պատմություններում հավաստի առկա էին միևնույն փաստերը: Եվ բոլորն էլ համակարծիք էին, թե ինչպես է սկսվել ամեն բան և ինչպես է ավարտվել: Ու ներկայացվում է իրական դեպքը.

«Եղել է այսպես. որպեսզի Այլիսի հայ բնակչությունը ոչինչ չկռահի, Ադիֆ բեյի 30-40 հեծյալները վաղ առավոտից շրջել են Այլիսի տներով՝ և՛ հայերի, և՛ մահմեդականների, հայտարարել, որ այսօր զինադադար է հռչակվելու, ուստի բոլորը շտապ պիտի հավաքվեն այսինչ հայի բակում: Այն բանից հետո, երբ ժողովուրդը հավաքվել է մատնանշված տեղում, թուրք զինվորները մահմեդականներին առանձնացրել են հայերից, շարք կանգնեցրել բակի տարբեր անկյուններում: Հանկարծ հնչել է բարձր հրաման. «Կրակ»: Եվ բակը բոլոր կողմերից շրջապատած թուրք զինվորները կրակի կարկուտ են տեղացել հայերի վրա: Շատերը զոհվել են անմիջապես, ողջ մնացածներին՝ մինչև վերջին մարդը, դաշույններով կտրել են կոկորդները և խողխողել սվինահար: Նրանց, ում հարկավոր է եղել թաղել տեղում, թաղել են իսկույն, մեծ փոս փորելով: Ում համար բակում և այգում տեղ չի ճարվել, նետել են գոմերը, մերձակա տների նկուղներն ու վառել: Մահմեդական կանայք, ովքեր այդ օրը տնից դուրս

¹ Աքրամ Այլիսի, Քարակերտ երազներ, էջ 65-66:

գալ նույնիսկ չէին համարձակվել, կատարվածը հետագայում նկարագրում էին այսպես. «Բոլոր առունների ջրերը մի ամբողջ շաբաթ կարմրել էին արյունից»: Ադիֆ բեյի ձին սև էր ազռավի նման: Ադիֆը՝ ձին հեծած, կանգնած էր դարպասի մոտ: «Կրակ» բղավելով նա մտրակեց ձիուն ու հեռացավ»¹:

Բժիշկ Աբասալիևը գրքում ներկայացվում է որպես Ազուլիսի պատմագիր, հոգեբան, նույնիսկ յուրատեսակ փիլիսոփա: Եվ Աբասալիևից է տեղեկանում դերասան Սադրղլին, որ նշանավոր վանական Մեսրոպ Մաշտոցը հենց Այլիսում է ստեղծել հայոց տառերը, որ հայտնի գրող Րաֆֆին ժամանակին դասավանդել է տեղի դպրոցում... Խոսելով այս նշանակալից երևույթների մասին՝ բժիշկ Աբասալիևը ներքին հոգեկան մի մղումով դիմում է Սադային. «Այլիսը, պատանյակ, աստվածային կատարելություն է... Եվ այն բանի համար, ինչ մենք արեցինք նրա հետ, ստիպված ենք լինելու Ահեղ Դատաստանի օրը պատասխան տալ Աստծո առջև»²:

Ազուլիսի կարոտը չի մարել երբեք նրանց սրտերում, ովքեր ինչ-որ չափով կապված են եղել նրա հետ: Բժիշկ Աբասալիևը վկայում է, որ մի հայ աղջիկ, որ փրկվել է 1919 թվականի կոտորածից, Ֆրանսիայում աճեցրել է նոր ծաղիկ և անվանել Ազուլիս: Թբիլիսիում ապրում է նկարչուհի Գայանե Խաչատրյանը, որն ինը-տասը տարեկանից սկսած՝ ամբողջ կյանքում նկարում է Ազուլիսի եկեղեցիները միայն: Ըստ բժիշկ Աբասալիևի՝ Աստծո 1001 անուններից մեկը հենց Այլիս է:

Ահա այս գնահատականից է հետևում Աքրամ Այլիսլիի հետևյալ ընդհանրացումը, որի ենթատեքստը խորն իմաստ ունի. «Այլիսի հանդեպ այդ սերը որևէ կապ չունի ոչ հայերի, ոչ մահմեդականների հետ: Դա, ավելի շուտ, ճշմարիտի հանդեպ մարդու հավատարմության ևս մեկ յուրատիպ և հիրավի վեհապանծ դրսևորում էր»³:

Տվյալ դեպքում ճշմարիտի գաղափարն ու իրական դեմքը Ազուլիսն է, որի հիմնադիր ու կառուցող հայերի հանդեպ կատարվել է ոճրագործություն հարևանների կողմից և երբեք չի մոռացվելու, և, որ կարևորն է, ադրբեջանցի անվանի գրողը իր հերոսի շուրթերով ներկայացնում է այդ եղելությունը՝ այն համարելով ստորություն ու հանցագործություն Աստծո հանդեպ: Ահա այս դեպքում է ժողովուրդն ասում. «Կրակ էլ տաս՝ ճշմարիտին մահ չկա»:

¹ Աքրամ Այլիսլի, Քարակերտ երազներ, էջ 69-70:

² Նշվ. աշխ., էջ 71:

³ Նշվ. աշխ., էջ 73:

Աքրամ Այլիսլին բժիշկ Աբասալիևի միջոցով գոհունակությամբ է ներկայացնում հայուհի Հայկանուշին, որն աչքի է ընկնում մաքրասիրությամբ, աշխատասիրությամբ: Նրա աճեցրած կիտրոնի ծառերն ասես խորհրդանշում են բնության հետ ունեցած իմաստնալից կապն ու բարիքներ ստեղծելու կարողությունը: Ազուլիսցի նրա հարևան Ջոհրա արվադը պատմում է, որ գյուղում Հայկանուշի նման լիմոնենիներ աճեցնող չի եղել: Հայկանուշը ունեցած-չունեցածը հավաքել է, գնացել Երևան իր որդի ժորայի մոտ: Իսկ լիմոնի ծառերը նվիրել է Ջոհրային: Վերջինս պատմում է այն մասին, որ Հայկանուշը Երևանում լավ է ընդունում շուկա գնացած ազուլիսցիներին: Իսկ երբ խոսք է բացվում Մահմեդադայի մասին, Ջոհրան անիծում է նրան, որի որդին՝ Ջինգյոզ Շարաբանին, ավելի վատն է, քան հայրը:

Հեղինակի ենթաբնագրային արձագանքն այն մասին է, որ շնից շուն է ծնվում: Այդ Շարբանն է, որ ինչ-որ տեղ մի հին գանգ է գտել, ցանկապատի վրայով նետել Ջուլֆի Աբասալիևի այգին, որի վրա կացրած թղթին գրել էր. «Սա ես եմ՝ տերտեր Սկրտիչը, հայկական լրտես Ջուլֆի Աբասալիևի հարազատ եղբայրը»¹:

Աքրամ Այլիսլին ներկայացնում է նաև իր դասընկերներ Ռումբ Բաբաշին և Ջամբուլ Ջամալին: Ջամալի հայրը, որի լուրը Մեծ Հայրենականից հասել էր, թե իբր զոհվել է, պատերազմից հետո Ղազախստանից նամակ է ուղարկում Այլիս՝ ընտանիքին, որ ինքն արդեն երկրորդ անգամ ամուսնացել է և այլևս չի վերադառնալու: Ջամալի մայրը խելագարվում է և հրաժեշտ տալիս կյանքին:

Ջամալը որբանում է, անտերանում: Նրան հետևում է Հայկանուշը՝ իմանալով, որ նրան խնամող չկա: Ու մի անգամ, ինչպես պատմում է Սադայը, եկեղեցու բակում, կեռասենու տակ Հայկանուշը խարույկ է վառում, մեծ պղնձե կաթսայով ջուր տաքացնում, օճառով լվանում նրա գլուխը, որտեղ այնքան ոջիլ կար, որքան մրջնանոցում՝ մրջյուն:

Տարիներ շարունակ Սադայի ականջներում հնչել են Հայկանուշի փաղաքշական բառերն՝ ուղղված որբ Ջամալին՝ գլուխը մաքրելու պահին. «Հարազատս, խղճուկս, որբուկս»: Սադայ Սադըղլիի ականջներում այս բառերը հնչում էին նաև այն ժամանակ, երբ նա ջարդված պառկած էր Բաքվի հիվանդանոցում:

Ջամալի գլուխը մաքրելու պահին ներկա էր նաև Հայկանուշի թոռնուհին՝ Լյուսիկը: Հայկանուշը իր գործը մայրաքար անելուց հետո աղոթում է եկեղեցու բակում: Սադայն այդ ժամանակ ասես հասկանում էր

¹ Աքրամ Այլիսլի, Քարակերտ երազներ, էջ 75:

Հայկանուշի աղոթքը և անգիտակցաբար խաչակնքում կյանքում առաջին անգամ ու նշմարում այն աստվածային լույսը, որ բխում է եկեղեցու գմբեթից: Չնայած Հայկանուշի մայրական վերաբերմունքին, հետագայում երախտամոռությանը են իրենց դրսևորում և՛ Ջամալը, և՛ Բարաշ Ջիյադովը: Ի դեպ, վերջինիս անվան տակ գրքի հեղինակը խորհրդանշում է Հայոց պատմության հայտնի գեղծարար Ջիյա Բունյաթովին:

Գրքի հեղինակը պատմում է, որ Այլիսի երկրորդ՝ աչքի զարնող ու ինքնատիպ հայուհին Անիկոն էր, որին բոլորն Անըղ էին ասում: «Նա խիզախ կին էր,- գրում է Այլիսիին,- հպարտ և կամային: Նա ամեն ինչ կարողանում էր, ամեն ինչ գիտեր, կարող էր մեղվապահներին օգտակար խորհուրդներ տալ մեղվաբուծությունից, մետաքսագործներին՝ շերամապահությունից, բժշկական կրթություն չունենալով՝ ապաքինում էր գյուղի հիվանդներին ու տկարներին, և միայն Ալլահին էր հայտնի, թե որտեղից այդ կնոջն այդքան կրակ և ուժ»¹:

Իսկ ի՞նչ ճակատագիր է ունեցել Անիկոն: Ըստ հեղինակի նկարագրության՝ Անիկոն ականատեսն էր այն բանի, թե ինչպես 1919 թվականի աշնանային այդ սև օրը թուրք զինվորները, հայերին գնդակահարելով, սրածելով, արյան լճում թաղեցին մեծից փոքր, և զոհերի մեջ էին նաև նրա ծնողները, եղբայրները, քույրերը: Ողջ Այլիսը գիտեր, որ տասնամյա Անիկոն այդ օրը թաքնվել է թոնրում ու փրկվել պատահաբար, չորս-հինգ օր այնտեղ մնացել առանց հաց ու ջրի, մինչև որ նրան գտել է միրզա Վահաբի մայրը՝ Ջոհրա արվադը: Միրզա Վահաբը, որը կրթություն էր ստացել Ստամբուլում և համարվում էր Այլիսի ամենաուսյալ մարդը, այդ ժամանակ մոտ երեսուն տարեկան էր: Նա Անիկոյին թաքցրեց իր տանը, մեծացրեց և, իհարկե, բռնի դարձրեց իր կինը: Անիկոն հոգածություն ու քնքշանք էր ցուցաբերում իրենից քսան տարով մեծ ամուսնու նկատմամբ: Նա Միրզա Վահաբին երկու որդի և դուստր պարգևեց: Անիկոն ասում էր, որ մահմեդական դավանանք է ընդունել: Եվ նույն կրակոտությանը, որևէ մեկից չվախենալով, ասում էր, որ անխուսափելի է օրը, երբ հայերը կվերադառնան Այլիս, ու այն կրկին կվերածվի դրախտավայրի: Իրեն մահմեդական կոչող Անիկոն չէր մոռանում Վանգի եկեղեցին, ավլում էր բակը, խնամում վառ ծաղիկները, որոնք ինքն էր աճեցրել և միշտ լուտանքներ էր թափում Միրալի քիչիի նախնիների գլխին, որովհետև Միրալին էր եկեղեցին դարձրել իր պահեստը և դռանը կողպեք կախել: Ինչպես ընդգծում է հեղինակը. «Անիկոյի տունն էլ չորս կողմից հիշեցնում էր հավերժ անթառամ ծաղիկների տոնական ցուցահանդես: Ծաղիկներ,

¹ Աքրամ Այլիսի, Քարակերտ երազներ, էջ 87:

որոնցից Այլիսում ոչ ոք չուներ: Այդ տանը Միրզա Վահաբը հաստատվել էր 1919 թվականի հայկական կոտորածից հետո... Գուցե, ծաղիկներ աճեցնելով՝ նա որոշակի նպատակ էր հետապնդում, կամենում էր անմահացնել սպանված յուրաքանչյուր ազգակցի հիշատակը»¹:

Սադայ Սադըղլին՝ որպես գրքի գլխավոր հերոս և բուն Ազուլիսի ծնունդ, իր հիշողության մեջ միշտ պահպանել է Անիկոյին՝ ոչ միայն իբրև հրաշալի մարդ և կին, այլև իբրև մի տեսակ յուրահատուկ՝ զվարթ և զրնգուն ձայն, որն իր մեջ ներառել էր ողջ Այլիսը՝ տներով, եկեղեցիներով, լեռներով, ճանապարհներով, ծառերով, առվակներով և աղբյուրներով, ձայն՝ վերահաս լուսաբացի զրնգուն ավետաբերը, ինչպես հաստատում է հեղինակը. «Անիկոն միշտ արթնանում էր լուսաբացին և զրնգուն երգում իր բարձրադիր պատշգամբում, ասես ցանկանում էր Այլիսի բոլոր մահմեդականներին ազդարարել, որ Այլիսում դեռ ապրում և հնչում է ձայնը հայ... Դա, անտարակույս, Այլիսի իրական տիրուհու՝ դարերի խորքից հասնող ձայնն էր»²:

Տարիներ անց Բաքվում Սադըղլին իր երազներում լսում էր Անիկոյի ձայնը, ասես Ազուլիսի ամեն առավոտը սկսվում էր հենց այդ ձայնի հետ: Եվ սարսափելին այն էր, որ Սադայը Բաքվում կռահում էր վերահաս անխուսափելի արյունահեղությունը: Ինչպես դա նկատում է հեղինակը. «Սակայն դժբախտությունը հենց այն էր, որ Սադայ Սադըղլին հիմա իր կյանքով չէր ապրում: Տարօրինակ էր. Սադայ Սադըղլին, որի նախնիներից ոչ ոք գեթ մի կաթիլ հայկական արյուն չէր ունեցել (նրա պապերից մեկը ուխտագնացություն էր կատարել Քերբալա, մյուսը՝ Մեքքա), ինչ-որ ժամանակից ի վեր իր մեջ կրում էր ոմն անանուն հայի: Ստույգ՝ ոչ թե կրում, այլ թաքցնում էր: Եվ այս հսկա քաղաքում ծեծված ու անօգնական սպանված յուրաքանչյուր հայի հետ ասես ինքն էլ էր ծեծվում, անարգվում, սպանվում»³:

Սադայը տեսնում էր նաև, թե ինչպես կայարանում մի երիտասարդ հայուհու ադրբեջանցի կանայք վառեցին՝ վրան բեռնափակ լցնելով: Սադայն իր կնոջը՝ Ազադային, այս դեպքը պատմելուց հետո նրա հետ կարծիքներ է փոխանակում Ադրբեջանի ժամանակակից իշխանությունների մասին: Ազադան նշում է. «Վաղուց արդեն ոչ մի իշխանություն չկա: Իսկ եթե կա՝ հենց ինքն է ամենուր թշնամանք սերմանում: Կարծում ես՝ ժողովուրդն էր Սունգայիթի դժոխային մղձավանջը կազմակերպել: Ոչ, թանկագինս, ոչ:

¹ Աքրամ Այլիսի, Քարակերտ երազներ, էջ 89:

² Նշվ. աշխ., էջ 89-90:

³ Նշվ. աշխ., էջ 43:

Դա ՊԱԿ-ի կամ, հավանաբար, այլևայլ մաֆիոզ խմբավորումների վերածված իշխանության մնացորդների կազմակերպածն էր: Երբեք չեն հավատա, Սադայ, թե ադրբեջանցիներն առանց իրական կազմակերպչի կարող էին դիմել այդպիսի խելագար գազանության»¹:

Կարծիքների փոխանակությունն ավելի է խորանում: Ամուսնու հարցին, թե ինչպես է այդպիսի բան ասում, չէ՞ որ եղել է Ալլիսում և գիտի ամեն ինչի մասին, կինը պատասխանում է. «Այո, ես եղել եմ Ալլիսում և գիտեմ, որ թուրքերը գազանաբար են վարվել տեղի անմեղ մարդկանց հետ: Իսկ դու եղե՞լ ես այն վայրերում, որտեղից հայերը վճռվել են հազարավոր դժբախտ ադրբեջանցիների: Գեթ մեկ անգամ մտածե՞լ ես այդ անտուն ու անհույս մարդկանց մասին: Արդյոք նրանց մասին մտածո՞ւմ են այս արյունահեղ խառնաշփոթն ստեղծած հայ հրահրիչները, որոնց նզովում են հենց իրենք՝ և՛ Ղարաբաղի, և՛ տեղի բաքվեցի հայերը: Իսկ նրանք հիմա թքած ունեն մեզ վրա միայն այն պատճառով, որ, իրենց կարծիքով, մենք էլ ենք թուրք: Եթե թուրքերը ձեզ կոտորել են՝ գնացեք նրանց հետ հաշիվներ պարզեք, ի՞նչ կապ ունենք մենք: Այդ հայ վայրահաչներն ինչո՞վ են մեր վայրենիներից լավ: Ինչո՞ւ այդ մասին չես մտածում, թանկագինս: Ինչ սկսել է այս ամենը, ինքդ քեզ կորցրել ես, գիտե՞ս ինչպես ես նիհարել, սիրելիս: Քեզ չես խղճում, գոնե ինձ խղճա: Չասկացիր, Սադայ, այդպես չի կարելի: Այս աշխարհում դու ոչինչ չես փոխի, քեզ կկործանես վերջնականապես: Ասում ես՝ կայարա՞ն էիր գնացել: Ախր ի՞նչ գործ ունեիր այնտեղ, սիրելիս»²:

Սադայը դժվարանում է պատասխանել կնոջը: Նա ասես խելագարության շենին էր, նա ասես օտարացել էր և՛ կնոջից, և՛ ընդհանրապես ամենայն երկրայինից: Ազադան ճիշտ հասկացավ, թե ինչու էր անուսինը գնացել կայարան: Չասկացավ, որ Սադայն ամբողջ օրերով դեզերում էր այնտեղ, որպեսզի դիմավորի և ճանապարհի մանկութ իրեն ծանոթ Բաքու-Երևան գնացքը: Այդ գնացքով, որ անցնում էր նրա հարազատ Օրդուբադով, նա ամեն օր մտովի ճամփորդում էր, փայփայում նոր գառանցագին երազանք էջմիածնի մասին և պատրաստվում էր քրիստոնեություն ընդունել:

Դժվար չէ նկատել, որ Սադայ Սադրլիլի կնոջ պատասխան- դատողությունների մեջ մեղադրանքներ կան նաև հայկական կողմի հանդեպ: Խոսքը վերաբերում է հազարավոր այն ադրբեջանցիներին, ում հայերը վճռվել էին Չայաստանից, ուր նրանք ապրում էին, իսկ վճռվելուց հետո մնացել են անտուն ու անհույս: Եվ այդ ամենի պատճառը Ազադան

¹ Աքրամ Ալլիսլի, Քարակերտ երազներ, էջ 95:

² Նշվ. աշխ., էջ 95-96:

համարում է արյունահեղ խառնաշփոթություն ստեղծած հայ հրահրիչներին:

Գրքի գլխավոր հերոսներից մեկի՝ Ազադայի այս կարծիքը գրքում մնում է անպատասխան: Հասկանալի է, որ Ադրբեջանում տիրող հակահայ քաղաքականության վտանգավոր պայմաններում գրողը չէր կարող ուղղակի պատասխանել կնոջը՝ ժխտելով նրա անընդունելի կարծիքը:

Երբեք ու երբեք չի կարելի Սումգայիթի և Բաքվի հակահայկական ոճրագործություններն ու կոտորածներն արդարացնել և դրանք առնչել Հայաստանից ադրբեջանցիների արտաքսմանը:

Նախ՝ Հայաստանում ադրբեջանցիների դեմ հայերի ընթուստությունը և նրանց արտաքսելն սկսվեց 1988թ. փետրվարի 26-28-ը՝ Սումգայիթում կազմակերպած հայերի ջարդերից ու սպանություններից հետո:

Երկրորդ՝ ոչ ոք չի կարող մատնանշել և ապացուցել, որ որևէ հայ որևէ ադրբեջանցու ջարդել կամ սպանել է: Նման դեպք չի եղել, և դա բացատրվում է հայ ժողովրդի քրիստոնեական բարոյահոգեբանական խառնվածքի ու վարքագծի հազարամյա կոփվածքով:

Երրորդ՝ Սումգայիթում, Բաքվում և, ընդհանրապես, Ադրբեջանի հայաշատ քաղաքներում ու հայկական շրջաններում հայերի դեմ իրականացված ջարդերը, կոտորածները, արտաքսումները չի կարելի համարել «հայ հրահրիչների» գործողությունների արդյունք:

Արցախյան ազգային-ազատագրական պայքարն սկսվել է այն օրվանից, երբ, թուրքամետ Լենինի և հայաստյաց Ստալինի որոշմամբ, Նախիջևանն ու Լեռնային Ղարաբաղը նետվեցին նորաթուխ Ադրբեջանի հայակույլ երախը: Խորհրդային 70 տարիների ընթացքում Ադրբեջանի կառավարող շրջանների հանցագործ քաղաքականության պատճառով Արցախում հայ ազգաբնակչությունը, որ 1921թ. 94,4 տոկոս էր, 1988-ին դարձավ 70 տոկոս: Առանձնապես կուսակցության Ադրբեջանի ԿԿ առաջին քարտուղար Ջեյդար Ալիևի վարած քաղաքականության հետևանքով միայն 1969թ. սկսած, Արցախում ադրբեջանցիների թիվը ավելացավ 10 տոկոսով: Բաքվի Վ.Ի. Լենինի անվան մանկավարժական ինստիտուտի հայկական բաժինը 1969թ. Բաքվից տեղափոխվեց Ստեփանակերտ՝ դրան գումարվելով նաև ադրբեջանական բաժինը, այն դեպքում, երբ Բաքվում, Նախիջևանում, Կիրովաբադում գործում էին հինգ մանկավարժական բուհեր՝ ադրբեջաներեն լեզվով: Կարճ ժամանակաընթացքում Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի պրոֆեսորադասախոսական կազմի գերակշիռ մասն արդեն ադրբեջանցիներ էին, իսկ

ադրբեջանցի ուսանողների թիվը համարյա կրկնակի ավելին էր, քան հայկական բաժնի ուսանողներինը:

Լեռնային Ղարաբաղի կոլտնտեսությունները երեք անգամ ավելի տուրքեր էին վճարում Յանրապետությանը, քան հարևան ադրբեջանական գյուղերը:

Ադրբեջանի կառավարությունը տարեցտարի ավելացնում էր հայկական գյուղերի ոչխարաբուծական ֆերմաների թիվը և պահանջում ավելացնել ոչխարների գլխաքանակը: Այդ պատրվակով յուրաքանչյուր հայկական գյուղում բնակություն էին հաստատում ադրբեջանցի հովիվները՝ իրենց բազմաքանակ երեխաներով:

Ադրբեջանի կառավարության պահանջով հավաքագրվում էին հայ պատանիները և տեղափոխվում Բաքու՝ որպես նավթարդյունաբերության բանվորներ: Իսկ դա ավելի էր արագացնում Արցախի հայաթափման գործընթացը:

Արցախի առողջապահության բնագավառում աշխատելու իրավունք չունեին Յայաստանում կրթություն ստացած երիտասարդ հայ բժիշկները: Փոխարենը տեղավորում էին ադրբեջանցի մասնագետներին:

Անվտանգության, կոնկրետ՝ ոստիկանության բնագավառի աշխատողներն Արցախում, կոնկրետ՝ Ստեփանակերտում, արդեն կազմում էին գերակշիռ մասը:

Ահա այն ոչ լրիվ հակահայ քաղաքականության արդյունքները, որոնք էլ հենց թելադրեցին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի մտավորականությանն ու ազգաբնակչությանը՝ սահմանադրորեն բարձրացնել Մայր Յայաստանին վերամիավորվելու պահանջը: Սակայն և՛ Ադրբեջանի, և՛ ԽՍՀՄ ղեկավարությունը՝ Գորբաչովի գլխավորությամբ, մերժեցին արցախցիների արդարացի պահանջը, դեռ ավելին, Ադրբեջանն սկսեց դաժան պատերազմ Արցախի դեմ: Արցախահայությունը ոտքի ելավ՝ պաշտպանելու իր հայրենիքն ու ազատ ապրելու իրավունքը:

Այնպես որ, չի կարելի Սումգայիթում, Բաքվում և ամբողջ Ադրբեջանում կազմակերպված հայկական ջարդերի ու կոտորածների մեղքը բարդել «հայ հրահրիչների» վրա: Այս բարդույթի պատասխանն է, որ հեղինակը շրջանցել է «Քարակերտ երազներ» գրքում: Սակայն այս փաստը չի կարող ստվեր ձգել այդ չափազանց արժեքավոր գրքի վրա, քանզի նրանում բերված փաստերն ու իրադարձություններն ապացուցում են և՛ Նախիջևանում, և՛ Ադրբեջանում ազերի-թուրքերի իրականացրած հայկական կոտորածները՝ նախ 1918-1919, ապա 1988-1990 թվականների

ընթացքում: Հեղինակը միաժամանակ դատապարտում է այդ հանցագործության կազմակերպիչներին:

«Քարակերտ երազների» երրորդ գլուխը բացվում է հետևյալ բնաբանով. «Սեփական ժողովրդին բարոյական ցեղասպանության ենթարկելու համար նախկին տիրոջը մեղադրում է երիտասարդ հեղինակն այն պիեսի, որի մեջ Սադայ Սադըղլին երբեք չի խաղալու»: Աքրամ Այլիսլին այստեղ արտահայտում է իր դժգոհությունը ադրբեջանցի այն գործիչներից, ովքեր հանուն իրենց շահի կարող են հաշտվել կեղծիքի, ստի ու ստորության հետ:

Գրքի գլխավոր հերոսը՝ Սադայ Սադըղլին, չի ընդունում Բաքվի դրամատիկական թատրոնի տնօրեն Մուպասան Միրալամովի հարմարվող բնավորությունը: Թատրոնում նոր բեմադրվող պիեսում գլխավոր դերը ցանկանում է հանձնարարել Սադային: Վերջինս, սակայն, չի մարմնավորում այն դերը, որի արարքում կարող է դրսևորվել քծնանքն այն ղեկավարի հանդեպ, որին ժողովուրդը չի ընդունում և չի հարգում:

Այս չլուծվող հարցի քննարկման պահերին ներկայացվում են նաև Սադայի մանկության տարիների ընկերները: Առանձնապես ընդգծված է Ջամալի կերպարը: Վերջինս եկել էր գյուղից: Սադայի՝ կարոտ հարուցող հարցին, թե ինչ նորություն կա գյուղում, Ջամալը դրսևորում է իր երախտամոռությունը հայուհիների հանդեպ: Նա հայտնում է, որ գարնան շեմին մահացավ Միրալի Քիչին: Այս վերջին օրերին էլ Անըղը հեռացավ կյանքից: Ջամալը վայրահաչում է այսպես. «Թե ինչքան չարություն կար պառավի մեջ, նույնիսկ մահվան շեմին էլ մնաց հայուհի: Երբ մեր կնանիք գնացին նրան հրաժեշտ տալու, բուրդին հայտարարեց՝ իբր մտքով չի էլ անցել փոխել իր հավատքը և երբեք իր Աստուծոց չի հրաժարվել: Այսինքն՝ ես ձեզ, կուլտուրական ասած, քթներից բռնած ման եմ տվել... ինչ ստոր եմ էդ հայերը»¹:

Սադայը չի հանդուրժում Ջամալի վայրահաչությունը՝ դիմելով. «Ի՞նչ է, հայերին զագրախոսելու մոդան հիմա Այլիս է՞լ է հասել»²: Սադային հուզել էր Այլիսի վերջին հայուհու՝ Անիկոյի մահվան լուրը:

Սադայը, զարմանքով նայելով Ջամալի թանկարժեք փափախին, հիշում է նրա կեղտոտ, ոջլոտած կեպին, որը մի օր ահով հանել էր նրա գլխից հայկանուշը:

Սադայը Ջամալին հանդիմանում է երախտամոռության համար, իսկ վերջինս բնավ չի վիրավորվում: Դերասանը եզրափակում է խոսքը. «Դու

¹ Աքրամ Այլիսլի, Քարակերտ երազներ, էջ 103:

² Նշվ. աշխ., էջ 103:

ծիշտ ես, հայերն իրենց Աստծու հետ միշտ էլ հաշտվել են»¹: Գրողն այս գլխում ևս անդրադառնում է Բաբաշ Ջիյադովի կերպարին, որն ստեղծել էր «Ժողովրդի նվիրյալների միություն» կազմակերպությունը և նրա նախագահն էր:

Սադայը հրաժարվում է խաղալ այն պիեսում, որտեղ պետք է փառաբանվի Առաջինը, քննադատվի Նախկինը: Իսկ երբ կրկին խոսք է բացվում Այլիսի հայերի մասին, նրա հոգում ասես դողանցում են նրա բոլոր 12 եկեղեցիների զանգերը, կրկին զայրույթով է խոսում Ադիֆ բեյի սև ձիու, մսագործ Մահմեդադայի սուրսայր դաշույնի մասին:

Ջրույցը տանելով թատրոնի տնօրենի հետ՝ Սադայն արտահայտում է իր զայրույթը երկրում տիրող քաղաքական իրավիճակի կապակցությամբ. «Այս երկու-երեք ամիսը լիուլի բավարար էր, որպեսզի հատուկ պատկերացում կազմեի, թե վերակառուցողական սույն ողջ կաղկանձը և քաղաքական ժխորն ուր են տանում երկիրը: Ես համոզվեցի, որ երկիրն այսպես անտաղանդորեն կարող են քանդել միայն գերանտաղանդ մարդիկ: Երկիրը վերածել են հսկա գծանոցի»²:

Սակայն դրանով չի սահմանափակվում Սադայ Սադըղլիի վրդովմունքը: Նա բացարձակ անարգանքի սյունին է գամում Բաբաշ Ջիյադովի զեղծարարությունը հայոց պատմության հանդեպ: Ջիյադովը հողված էր տպագրել «Կոմունիստ» թերթում՝ «Չայկական նենգ հետքը» խորագրով՝ Բաբախան Ջիյադխանլի ստորագրությամբ: Հողվածագիրը ստորությամբ վիրավորում է հայերին: Սադայը զարմանում է «Իստազըն» բառի նրա բացատրությամբ: Ըստ Բաբաշ Ջիյադովի՝ «Իստազըն» բառն ի սկզբանե նշանակել է «ուստա օզան» և, իբր, որպեսզի պատմության միջից ջնջեն այդ հողերի իրական բնիկների գոյության հետքերը, հայերը նենգամտորեն աղավաղել են այն, հարմարեցրել իրենց լեզվին: Իբր այս «ուստա օզանները» դեռևս մ.թ.ա. 3 հազար տարի ու ավելի առաջ լեռնային Այլիսից վերաբնակվել են Միջագետքում ու շուն-երում, այսինքն՝ հարթավայրում և այնտեղ հիմնել պետություն ու իրենց լեզվով կոչել «Շուներ»: Այդպես՝ այնտեղ սկիզբ է դրվել հնագույն մշակույթի, որը հիմա հայտնի է «Շուներական» անվամբ:

Սադըղլին զարմանում է Բաբախան Ջիյադխանլիի ցնդաբանությամբ: Ըստ այդ զեղծարարի՝ «Այլիս» բառը ծագել է «այլաջ» բառից, որը նշանակում է «բնակության վայր, բնակավայր»: Իբր Այլիսում հայեր երբեք

¹ Աքրամ Այլիսլի, Քարակերտ երազներ, էջ 104:

² Նշվ. աշխ., էջ 117-118:

չեն ապրել, և բոլոր եկեղեցիներն ու գերեզմանները նախկինում «օղա-րերեն» լեզվով կոչվել են «գյուր-օղ»՝ «նուլեգին կրակ» և հանդիսացել են հնագույն թուրքերի հողեր, իսկ այդ «հնագույն թուրքերը» առավել հայտ-նի են «աղվաններ» անվամբ: Սադայի զարմանքը շարունակվում է, երբ Բաբախան Ձիյադխանլին կրքոտ ձգտում է ապացուցել, որ մեր «ապե-րախտ» հարևանները ողջ պատմության ընթացքում փոփոխել են Ադր-բեջանի տեղանունները, դրանց տվել իրենց անունները: Օրինակ՝ Օդեր-մանը նրանք կոչել են Գարդման, Գյուրսուն՝ Գորիս, Գուրբաղը՝ Ղարա-բաղ, Էլվենդը՝ Երևան, այդ տարածքները ներկայացրել իբրև պատմակա-նորեն իրենցը: Տարածքը, որ օղայերեն կոչվել է Գապուարգըզ (այսինքն՝ մուտք, դարպաս), հետագայում ռուսականացվելով՝ դարձել է Կովկաս և եղել է հնագույն «էրմենների»՝ թուրք փաշայի այրերի երկիր, սակայն, իբր, մեր հարևաններն իրենց ազգի անունը վերցրել են հենց այդ բառից, ու հենց այդպես էլ Կովկասում ի հայտ է եկել առաջներում երբեք այնտեղ գոյություն չունեցած «էրմենի»՝ հայ ժողովուրդը: Կարդալով այս զառան-ցանքը՝ ինչպես գրում է Աքրամ Այլիսլին. «Դերասանը մտովի փողոց առ փողոց, տուն առ տուն անցնում էր Այլիսով՝ Իստազընից (Աստվածատուն) մինչև Վուրագըրդ (Վարդակերտ), իսկ ընթերցանությունն ավարտելով՝ հանկարծ, չգիտես ինչու, մտածեց, որ այլևս երբեք չի տեսնի Այլիսը, չի անցնի նրա այգիներով ու փողոցներով»¹:

Դերասանը վրդովված դիմում է թատրոնի տնօրենին. «Ո՞վ է Բաբաշ Ձիյադդին թույլատրել պետական պաշտոնաթերթում նման գարշահոտ աղբ տպագրել, և ինչո՞ւ այդ աղբի տակ ստորագրել է ոչ թե Բաբաշ Ձիյադդ, այլ Բաբախան Ձիյադխանլի անվամբ: Այդ տականքի տոհմում երբևէ ոչ խան է եղել, ոչ բեկ»²:

Հեղինակը խիստ քննադատում է Բաքվի փողոցներում ամբոխների առկայությունը, նրանց, ովքեր, ամենուր «Ղարաբաղ, Ղարաբաղ» գոռա-լով, դարձել են իսկական աճապարարներ: Գրողը, իր հերոսի արտահայ-տությամբ, նշում է, որ այդ «կռված տղերքը» թքած ունեն Ղարաբաղի վրա: Նրանց նպատակն այս իշխանությունը տապալելն ու իշխանու-թյունն իրենց ձեռքը վերցնելն է: Իսկ ամբոխը փողոցում հիմա լսում է միայն նրանց, ովքեր հայերին են հայհոյում:

Սադայ Սադղլին հրաժարվում է այն պիեսից, որտեղ պիտի մարմնա-վորեր նման քաղաքականությունը խրախուսող Առաջնորդի կերպարը:

¹ Աքրամ Այլիսլի, Քարակերտ երազներ, էջ 124:

² Նշվ. աշխ., էջ 125:

* * *

Գրքի չորրորդ՝ վերջին գլխի բնաբանը բերվում է գլխավոր հերոսներից մեկի՝ բժիշկ Աբասալիկի հավաստմամբ. «Եթե յուրաքանչյուր սպանված հայի համար գեթ մի մոմ վառվի՝ այդ մոմերի ցուլքը լուսնի լուսից վառ կլինի»:

Պատումն սկսվում է հուսադրող խոհերով՝ ընդգծվում է, որ աշխարհը չի կարող բաղկացած լինել միայն մշուշից, և Սադայ Սադըղլին գիտեր դա ու անգամ անգիտակից վիճակում չէր կարողանում հասկանալ, թե որտեղ է գտնվում: Այդ վիճակում ևս դերասանը Ալլիսի հետ է, նրա գրկում, ինչպես պատկերում է հեղինակը. «Նրան թվաց, թե ինքը Ալլիսում է, Վուրագըրդի եկեղեցի տանող քարասալարկ նեղլիկ փողոցում նստած: Բայց այն տեղից, ուր նա նստած էր, եկեղեցին չէր երևում, չէր երևում նաև եկեղեցու թիկունքի բարձր լեռը, և տազնապով ու վախով համակված դերասանը կրկին փորձեց հասկանալ, թե որտեղ է ինքը, եթե սա Ալլիսի վուրագըրդյան քարասալարկ նկուղն է, ապա ո՞ր եմ անհետացել եկեղեցին ու լեռը: Այդ երազային պատկերից հետո «դերասանը անրջալի հույսով հավատաց, որ ինքն արդեն հեռու է և՛ լեռից, և՛ եկեղեցուց, և՛ վուրագըրդյան փողոցից ու արդեն մոտենում է Էջմիածնին: Այդ նոր երջանկության զգացողությունը, որ բալասանի մման տարածվեց հոգում, երբ նրան վիրահատարանից հիվանդասենյակ էին տեղափոխում»¹:

Դժվար չէ կռահել, որ Սադայ Սադըղլին մտատանջում են ազերի-թուրք ղեկավարների կազմակերպած հայկական կոտորածները Սում-գայիթում ու Բաքվում, իսկ այդ ծանրածանր մեղքը քավելու պարտականությունը վերցրել է իր վրա ու երագում է այն քավել Էջմիածնի միջոցով: Այնպիսի վիճակում էր նա, որ հիվանդանոցում գտնվելու չորրորդ օրը, երբ ուշքի է գալիս ու ձախ ձեռքը մի կերպ շարժում, կնոջը՝ Ազադային, թվում է, թե նա ցանկանում էր խաչակնքել հայ քրիստոնյայի մման: Սակայն անհանգիստ է նաև հիվանդանոցային մթնոլորտը: Մի կողմից՝ Սադայ Սադըղլին տառապում է՝ իր ցեղակիցների մեղքերն անվերջ հիշելով, մյուս կողմից՝ Ադրբեջանի հեռուստատեսությունը հաղորդում է հակահայկական ելույթներ:

Հաճախակի հեռուստացույցի էկրաններին հայտնվում էր ամրակազմ, լայնադեմ, թավամորուք տղամարդ ու ձեռքերը թափահարելով՝ տաք-տաք խոսում: Իրականում, ինչպես ներկայացնում է գրողը, նա «Լեմինին և կուսակցությանը նվիրված բանաստեղծությունների շնորհիվ արդեն երեսունից ավելի տեղ էր գտել դպրոցական բոլոր քրեստոնմատիաներում: Սակայն այդ բանաստեղծությունները հեղինակի անվան հետ մի տարվա

¹ Աքրամ Ալլիսի, Քարակերտ երագներ, էջ 130-131:

մեջ ջնջվեցին մարդկանց հիշողություններից: Հիմա բանաստեղծին կոչում էին Ուլուրուխ Թուրանմեքան, և հարյուր-հազարավոր մարդիկ ոչ միայն Լենինի հրապարակի միտինգներում, այլև ամենախեղձավոր գյուղերում հարսանիքների և հոգեհացի ժամանակ ոգեշնչված արտասանում էին նրա «Ղարաբաղ, դու իմ ճրագ» պոեմը»¹:

Բժիշկ Ֆարզանին ոչինչ չգիտեր ոչ Խալիլուլլահ Խալիլովի, ոչ Ուլուրուխ Թուրանմեքանի մասին: Երևի որպես բժիշկ՝ ուզում էր հասկանալ, թե սույն անձնավորությունն ինչ աղբյուրներից է քաղում իր անզուսպ էներգիան: Նա վերջապես հանգեց այն եզրակացության, որ հասկանալու բան առանձնապես չկա էլ: Եվ այդ հետևության նրան մղեցին այն երկու տողերը, որոնք, Ելույթն ավարտելով, բանաստեղծն արտաբերեց բարձրագույն և առանձնահատուկ պաթոսով.

Աչքդ մի տնկիր իմ հողին, հայ,
Իմացիր, հողը չի բաշխվում փայ:

Աքրամ Այլիսլին բժիշկ Ֆարզանիի միջոցով նման հիմնարկություններ դուրս տվողին համարում է մորուքավոր երեխա և ժողովրդական իմաստությանը նշում, որ նմաններին ուրիշի հողում փայ է հասնում՝ երկարությունը ամենաշատը երկու մետր, լայնությունը՝ հիսուն-վաթսուն սանտիմետրից ոչ ավելի:

Կյանքն ապացուցել է այս իմաստուն խոսքը, երբ ազերի-թուրքերը հազար-հազարներով ներխուժեցին Հայոց Արցախ և իրենց փայ-հողի բաժինը գտան ոչ իրենց հողում:

Աքրամ Այլիսլին նկարագրում է նաև Բաքվում և նրա շուրջ տիրող անկարգությունները, գողություններն ու անվստահությունները ադրբեջանցիների միջև: Երբ հարազատները նոր տարվա շեմին պայմանավորվում են Ամանորը դիմավորել միասին, բժիշկ Աբասալիևը զանգահարում և հայտնում է. «Վախենում են այսպիսի օրով ամառանոցն անտեր թողնել: Երկիրը դարձրել են ավազակների որջ: Նույնիսկ մարդաքյանցիների վրա այլևս հույս դնել չեմ կարող»²:

Օրերն անցնում են հիվանդանոցում: Տասներորդ օրը՝ վաղ առավոտյան, բժիշկ Աբասալիևը անսպասելիորեն բացում է դուռը և խուժում հիվանդասենյակ, նետվում է փեսայի մոտ, համբուրում: Ապա մոտենում է, ամուր սեղմում բժիշկ Ֆարզանիի ձեռքը, ընտանեվարի շոյում բուժքույր Մունավեր խանումի սպիտակ մազերը: Ապա հանում է բաճկոնը, համբու-

¹ Աքրամ Այլիսլի, *Քարակերտ երազներ*, էջ 132-133:

² Նշվ. աշխ., էջ 137:

րում դստեր՝ Ազադայի ճակատն ու նստում մահճակալի մոտ դրված բազկաթոռին:

Բժիշկ Աբասալիևը ոգևորված հայտնում է, որ փեսայի՝ Սադայի համար բերել է «Երեք հարյուր քառասնամյա վաղեմության չքնաղ Այլիսը» գիրքը: Խոսքը Ջաքարիա Ագուլիսեցու օրագրի մասին է: Աբասալիևը հայտնում է, որ այն տեսել է Սիրզա Վահաբի մոտ՝ դեռևս մինչև թուրքերի կողմից Ագուլիսի ավերելը: Իսկ Յայրենական մեծ պատերազմից հետո նրա երևանցի ընկերն է ուղարկել օրագրի ռուսերեն թարգմանությունը՝ «Дневник Закария Агулсского» վերնագրով: Աբասալիևը բժիշկ Ֆարգանիին հայտնում է, որ Ագուլիսի մահմեդականներն այնքան են հարգել Ջաքարիային, որ նույնիսկ իրենց զավակներին անվանակոչել են նրա անվամբ: Աբասալիևն ապա հայացքն ուղղում է փեսայի կողմը և ասում. «Պատանյակ, երբևէ տեսե՞լ ես, որ որևէ տեղ մահմեդականներն իրենց որդիներին Ջեքերիա անվանակոչեն: Իսկ Ջեքերիա անվամբ մարդուն Այլիսում ինձնից շատ ես հանդիպել»¹:

Իսկ երբ վիրաբույժ Ֆարգանին պատրաստվում էր դուրս գալ հիվանդանոցից, Աբասալիևը խնդրում է նրան՝ սպասել և լսել: Նա օրագրի էջերն է թերթում և կարդում, հիանում, որ Ջաքարիան հայտնել է իր ծննդյան թիվը՝ 1630, ապա իր վաճառականությունն անելու սկիզբը՝ 1647:

Աքրամ Այլիսիին այսպիսով հետապնդել է մի ազնիվ նպատակ՝ ցույց տալ, որ Ագուլիսի հիմնադրման, կառուցման, զարգացման ընթացքում առաջնային տեղն ու պատիվը պատկանում է հայերին: Գրողը միաժամանակ Ջաքարիայի օրագրից բերում է այնպիսի հատվածներ, որոնցում նկարագրված են այն դժբախտությունները, որ Ագուլիսի գլխին բերել են այլևայլ շահերը, խաները, սուլթանները:

Նշենք այդ հատվածներից որոշ փաստեր, որ բերված են Ջաքարիա Ագուլիսեցու օրագրից. «1635 թվական, 10-ը հուլիսի: Ագուլիս: Այսօր Ագուլիս եկավ շահ Աբասի կուսակալ Լաթիֆ աղան: Նա գրի առավ տասնվեց մանկահասակ տղաների և աղջիկների անուններ, բայց ոչ մեկին չտարավ իր հետ: Այս անգամ Աստված գթաց մեզ»²:

Ավելի դաժան է գտնվել շահ Աբասի հետնորդ շահ Սուլեյմանը: Ջաքարիան գրել է. «Սաֆիկուլի խանի հրամանով այսօր Երևանից Ագուլիս եկավ Գագայրզ բեկ անվամբ մի ոմն: Նա իր հետ բերեց երեսուն հեծյալ: Շահի հրամանով նրանք պիտի Ագուլիսի բնակիչներից գանձեին 1000 թուման: Սահման չկար կաշառքին, շահագործմանը, բռնությանը: Նրանք

¹ Աքրամ Այլիսի, Քարակերտ երազներ, էջ 139:

² Նշվ. աշխ., էջ 141:

կտտանքների ենթարկեցին ավելի քան հարյուր մարդու, կախաղան բարձրացրին երեսունհինգին: Սակայն այդ ողջ տառապանքից հետո էլ ժողովուրդը կարողացավ հավաքել ընդամենը 350 թուման»¹:

Ութսունն անց բժիշկ Աբասալիևը հուզմունքով էր ընթերցում Ջաքարիա Ազուլիսեցու օրագիրը, հաճախ անգիր էր բերում առանձին հատվածներ:

Վիրաբույժ Ֆարգանին էլ ուշադիր ու հետաքրքրությամբ էր լսում բժշկին: Ահա և մի ուրիշ հատված օրագրից. «Այսօր Ազուլիս եկավ Խոսրով աղան և ժողովողին հայտնեց, որ իրեն նշանակել են Գողթնի կառավարիչ: Իր հետ բերել էր շատերին՝ Մեղրիից, Շոռոթից, Լեգրամից: Ինչպե՞ս էին նրանք ծաղրում Ազուլիսի Մելիք Յովհաննեսին: Խեղճին ավանակ նստեցրին և զուռնի նվագի տակ ման տվին ամեն տեղ: Ապա խլեցին նրանից հարյուր թուման և բաց թողեցին»²:

Բժիշկ Աբասալիևը շարունակում է թվարկել կարևոր տեղեկություններն ու փաստերը Ջաքարիայի օրագրից: Նա նշում է, որ Վանգի եկեղեցին Սուրբ Թովմասի եկեղեցին է: Վուրագըրդը՝ հայերեն Վարդակերտ բառի աղավաղված ձևն է, իսկ այն, որ աղբբեջանցիները կոչում են Քարակերտ եկեղեցի, Սուրբ Յովհաննեսի եկեղեցին է:

Աբասալիևը ոգեշնչված շարունակում է կարդալ Ջաքարիա Ազուլիսեցու օրագիրը: Աբրամ Այլիսլին այս պատկերին զուգահեռ անդրադառնում է նաև Աղբբեջանի ժամանակակից վայ-գիտնականների ստահող ու կեղծ հաղորդումներին: Գրքի կերպարներից բուժքույր Մունավեր խանումը միջամտում է. «Բժիշկ, բայց ամենուր գրում են, որ այդ եկեղեցիները հայկական չեն, աղվանական են: Ասում են՝ հայերը հետո սեփականել են դրանք: Գուցե ձեր Ջաքարիա՞ն էլ ոչ թե հայ է եղել, այլ աղվան»:

Բժիշկն, առանց հայացքը թղթերից կտրելու, բացականչում է. «Կատարյալ տխմարություն ես դուրս տալիս: Եթե ինչ-որ մեկը ինքն իրեն հայ է համարում, ինչպե՞ս կարող են ես ասել՝ ոչ, դու հայ չես: Դու աղվան ես, թալիշ, լեզգի և այլն»³:

Բժիշկն օրինակներ է բերում տարբեր շրջաններում ապրող և՛ հայ, և՛ մահմեդական բնակիչների լեզուների որոշակի տարբերություններից ու դրանք համարում բնական: Նա խոսում է նաև այն մասին, որ որոշ գիտնականներ հա՛ խոսում են աղվանների մասին: «Ես չգիտեմ,- ասում է

¹ Աբրամ Այլիսլի, Քարակերտ երագներ, էջ 141:

² Նշվ. աշխ., էջ 142:

³ Նշվ. աշխ., էջ 144:

նա,- ովքեր են եղել այդ աղվանները, որտեղ են ապրել: Բայց գիտեն, որ այլիսցիները հայ էին, ընդ որում, ամենաառաջնակարգ հայեր»¹:

Աբասալիևն, այս անգամ դիմելով վիրաբույժ Ֆարիդ Ֆարզանիին, շարունակում է խոսքը և ընդգծում, որ արաբական արշավանքներից հետո՝ 8-13-րդ դարերում, եղել են և՛ թուրքական, և՛ թաթար-մոնղոլական արշավանքներ, եղել են և՛ օղուզներ, և՛ սելջուկներ: Հետո գրեթե երեք դար այդ հողերը եղել են Թուրքիայի և Պարսկաստանի միջև արյունահեղ կռիվների թատերաբեմ: Ով գալիս՝ սպանում էր, սպանում էին մշտապես: Այս բացատրությունից անմիջապես հետո ցավով ընդհանրացնում է. *«Եթե յուրաքանչյուր սպանված հայի համար գեթ մի մոմ վառվի՝ այդ մոմերի ցուլքը լուսնի լույսից վառ կլինի»*²:

Աբասալիևն ընդգծում է նաև հայերի կամքի ուժը՝ այն առումով, որ նրանք հանդուրժել են ամեն ինչ, բայց իրենց հավատը փոխելու հետ երբեք չեն համակերպվել: «Այդ ժողովուրդը,- նշում է նա,- հոգնահար և տանջահար էր բռնության տակ, բայց երբեք չի դադարել կառուցել իր եկեղեցիները, գրել իր գրքերը և ձեռքերը երկինք կարկառելով՝ աղոթել իր Աստծուն»³:

Իսկ վիրաբույժ Ֆարզանին ընդհատում է նրան՝ ասելով. «Իսկ ուրիշ ի՞նչ կարող էր անել հողից զրկված ժողովուրդը: Միայն մի բան՝ ձեռքերը երկինք կարկառել», Աբասալիևը նորից մի էջ է հանում տրցակից և կարդում Ջաքարիայի գրառումներից. «1651 թվական, 7-ը հոկտեմբերի, Թավրիզ: Իմ եղբայր Սիմոնի հետ ժամանեցինք Թավրիզ: Թավրիզի տիրակալ Ալիգուլու խանը կամենում էր, որ Սիմոնը մահմեդական հավատ ընդունի: Միայն Աստված ազատեց մեզ այդ մեծ դժբախտությունից»⁴:

Աբասալիևը գոհունակությամբ ընդգծում է, որ բնիկ ազուլիսեցիները, ասել է թե՛ իրենց հայրենակիցները, հավատում էին իրենց Աստծուն: Թեկուզ Ալիգուլու խանը պատրաստ էր ոսկու մեջ լողացնել Սիմոնին, եթե նա համաձայներ մահմեդականություն ընդունել:

Աբրամ Այլիսլին գրքի չորրորդ գլխի վերջնամասում նկարագրում է Սադայ Սադըղլիի ծանր վիճակը հիվանդանոցում և անգամ նման վիճակում էջմիածնի վանկատված անվան շշնջալը: Իսկ Աբասալիևն ինչ-որ ներքին գոհունակությամբ ու համակրանքով ներկայացնում է հայերի անցյալն Ազուլիսում, նրանց բնավորության առանձնահատկություններն

¹ Աբրամ Այլիսլի, Քարակերտ երազներ, էջ 144:

² Նշվ. աշխ., էջ 148:

³ Նշվ. աշխ., էջ 144:

⁴ Նշվ. աշխ., էջ 145:

ու ապրելու բանաձևն՝ ըստ Ջաքարիա Ագուլիսեցու օրագրի: Հայերն ապրել են Ագուլիսում՝ ինչպես աստվածներին հավասարազոր մարդիկ: Նա թվարկում է նրանց արած-թողածը: Հայերը ջրնուղ են սարքել, այգի տնկել, քար տաշել: Հայերը՝ թե՛ արհեստավորները և թե՛ վաճառականները, շրջել են հարյուրավոր գյուղեր ու քաղաքներ, գրոշ առ գրոշ վաստակել սոսկ նրա համար, որ իրենց փոքրիկ Ագուլիսի ամեն թիզ վերածեն հիրավի դրախտային անկյունի: «Այն բանից հետո,- ասում է նա,- երբ թուրքերը, տասնինը թվականի վերջին Ագուլիսը ավերակ թողնելով հեռացան, Ագուլիսի մահմեդական բնակչությունը հայերի տների ավերակներում մինչև հիմա ոսկի է փնտրում: Նույնիսկ երբ ցանքսի համար հող են փորում, ակնկալում են, որ իրեն՝ ոտքերի տակից չերվոն ոսկի կհայտնվի: Այն նույն ոսկին, որի օգնությամբ հայերը գետնի տակից ջուր են հանել, լեռների բուլոր կողմերից ծառուղիներ փորել ու հատել, ջրամբարներ ու ամբարտակներ կառուցել: Տաշած գետաքարով պատնեշներ կանգնեցրել գետափերի երկայնքով: Բուլոր փողոցները սալարկել ընտրովի գլաքարով: Այդ ոսկու շնորհիվ են ժամանակին Այլիսում կառուցել տասներկու վեհաշուք եկեղեցի: Յուրաքանչյուրի վրա գուցե ծախսվել է մեկական տոննա ոսկի»¹:

Սադայ Սադըղլին ծանր վիճակում բժիշկ Աբասալիկին ասես նայում էր հեռավոր մի աշխարհից, ձգտում էր հիշել, թե ով է նա: Երևում էին կանայք, որոնք սպասում էին եկեղեցիների, վանականների, Ագուլիսի մասին խոսակցությունների ավարտին: Նրան կրկին զննելուց հետո բժիշկ Ֆարգանին հայտնում է, որ դերասանի ուղեղի վրա ոչ մեծ ուռուցք է նկատել: Մտորում են՝ գուցե հիվանդին տանեն Մոսկվա՝ բուժումը շարունակելու: Սակայն Սադայը հեռավոր իր աշխարհում էր: Նրան երևում էր Այլիսը՝ բայց լուսաշատ քարակերտ ցանկապատների փոխարեն տեսնում էր ներկայի Ագուլիսը՝ սովորական, կավածեփ գորշ ցանկապատով և մանկության տարիներին ցանկապատն ի վար հոսող ալ արյունը այն սևուկ սևաթույր աղվեսիկի, որին սպանել էր իր ընկերը:

Այս խոսում պատկերի ենթաբնագրային իմաստն այն մասին է, որ Սադայ Սադըղլիի կորած մանկության հետ պատմության գիրկն է անցել քարակերտ պարիսպներ, տասներկու հոյաշեն եկեղեցիներ ունեցող հայաշունչ Ագուլիսը:

«Քարակերտ երազներ» վեպ-ռեքվիեմն ավարտվում է նախ 1990 թվականի հունվարի 12-ի ուրբաթօրյա մոտալուտ երեկոյի և Ուլուրուխ

¹ Աբրամ Այլիսլի, Քարակերտ երազներ, էջ 177:

Թուրաններանի ահազու լոզունգների տակ Բաքվի փողոցներում գազազած ամբոխների գոռում-գոչումով ընթացող երթերի նկարագրությամբ: Երեկոյան կողմ հերթական միտինգն անցկացնում են Պարապետ կոչվող զբոսայգուն կից հայկական եկեղեցու մոտ: Խալիլուլլահի կամակատարները ժամից ավելի փորձում էին հրկիզել եկեղեցին: Ինչպես ընդգծում է հեղինակը. «Սակայն եկեղեցին բնավ չէր ուզում վառվել, և հենց այդ հանգամանքը առանձնապես կատաղեցնում էր բանաստեղծի շուրջ խմբված անմարդ կին-հայրենասերներին»¹:

Հիվանդանոցում կյանքից հեռանում է Սադայ Սադրղլին:

Սակայն վեպի հեղինակը դրանով չի վերջակետում ասելիքը: Նա ճշմարտացիորեն կռահում է Բաքվում տեղի ունենալիք ողբերգությունը հետևյալ պատկերավոր նկարագրությամբ. «Պարապետին կից եկեղեցու պատուհաններից ելնող ծխի սև քուլաները, միախառնվելով 1990 թվականի հունվարի 13-ի արյունագույժ սև գիշերվան, հետզհետե ավելի ու ավելի էին թանձրանում»²:

Իսկ 1990-ի հունվարի 13-ին էլ հենց սկսվել էին Բաքվի հայերի ջարդերն ու սպանությունները, վերջնական արտաքսումը իրենց իսկ կառուցած այդ քաղաքից:

Աքրամ Այլիսլիի «Քարակերտ երազներ» վեպ-ռեքվիեմը հումանիստ, ազնիվ գրողի մաքուր խղճի ճիչ է, սեփական մոլորված ժողովրդի պատիվը փրկելու կոչ: Չնայած նա ենթարկվեց Ադրբեջանի ժամանակակից ֆաշիստացած կառավարող շրջանների ու նրանց հլու-հնազանդ կամակատարների հալածանքին, բայց հավատարիմ մնաց հետևյալ ասացվածքին, որ հատուկ է բոլոր ժողովուրդներին. «Կրակ էլ տաս՝ ճշմարիտին մահ չկա»: Աքրամ Այլիսլին կատարել է Ադրբեջանի գրողների կյանքում աննախադեպ մի խիզախություն՝ ասելով ճշմարիտ խոսքը հայ ժողովրդի շինարար ոգու, նրա կրած տառապանքների մասին, միաժամանակ խարազանել գազանաբարո այն թուրք ավազակներին, ովքեր պետք է պատասխան տան Ահեղ դատաստանի ժամին:

¹ Աքրամ Այլիսլի, Քարակերտ երազներ, էջ 151:

² Նշվ. աշխ., էջ 152:

Правда не горит даже в костре.

Сократ Ханян

Резюме

В данном литературоведческом эссе обсуждается и оценивается роман-реквием “Каменные сны” (2012) народного писателя Азербайджана Акрама Айлисли.

Вкратце представляя биографические данные об 75-летнем Акраме Айлисли (Акрам Наджаф оглы Наибов), автор статьи роман “Каменные сны” считает эпохальным произведением, насыщенным гуманистическими идеями. Но, к сожалению, руководство Азербайджана, уподобляясь невежественной толпе, приняло это произведение фашистским воем, сжигая в костре все творчество писателя.

В своем романе А. Айлисли, руководствуясь конкретными фактами, с глубокой болью описывает армянские погромы, организованные со стороны османских и азербайджанских турок в 1919 г. в Агулисе и в 1988-1994гг. в Сумгаите, Баку и других городах и селах Республики.

А. Айлисли не смиряется с анти-армянской пропагандой руководства Азербайджана, одновременно бичуя тех азербайджанских лжеученых, которые, подделывая истинную историю, стараются присваивать не только территории, но и духовные и материальные памятники армянского народа.

The Truth never Burns, Even in a Fire

Sokrat Khanyan

Summary

In this literary essay the novel requiem “Stone dreams” written by Azerbaijani national writer Akram Aylylsly is discussed and estimated.

Briefly introducing 75 year-old Akram Aylylsly's (Akram Najaf ohly Naibov) biography, the author considers it to be an epochal work, filled with humanistic ideas. But unfortunately Azerbaijan's government, assimilating themselves to a thick-headed crowd, admitted that work with fascist howl, having burnt in a fire all oeuvre of the writer.

In his work A.Aylylsly guided by concrete facts with deep pain in his heart describes Armenian pogroms, organized by Ottoman and Azerbaijani Turks in 1919 in Aghulis and in 1988-1991 in Sumgait, Baku and other cities and villages of the Republic.

A.Aylylsly does not accept the anti-Armenian propaganda of Azerbaijan government, simultaneously flagellating those Azerbaijani sciolists, who forging truthful history, try to assign not only the territories, but also spiritual and material monuments of Armenian people.